




108

L IV-6







# ՎԱՐՓՈՒԹՅՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՂՈՎԻ ԱՄՅՈՒԴԻՒ

ՕԳՈՍՏՈՒ

1883 թ. ՏԸՐԻ

№ 1

ԽՍՑԿԵՐ ԲՈՅՉԵՐ

Յօրսեը կերպեցիւմ են լոքանց արմատներով, որոնք ապահովելով դեմոնի ոռոկ արձակում են խրեանցից անթիւ մանր եւ բարակ մազմզուկնել — թէլիկներ: Այս խոկ թէլիկներով նոքտ սպառում են հայից հեղանիւթն ու զազն, պանք թափանցում են բալար մէջ: Պինդ մարմիններ՝ թէլե լինեն մանր ու բաժանում ամենանուրը մասերի՝ չեն կարող թափանցիլ սրբանների միջով, որպէսիսն ուքտ իւրեանց վերաց չունեն ծակոտիկներ կամ գործարաններ ուրդ ահասոկ նիւթեր բնողութելու համար: Աւստի բորսերի սպազմն նիւթերը պէտք է լինին հեղանիւթի կամ զազի ձևով:

Յօրսը հոգից սպանում է՝ երկաթ, ծծումբ, կոլտքար, զայլախաղ, սլոտոն, կիր, զանտզան աեսոկ աղեր, չըի մէջ լուծուած ածխոտթթուալին զազ և ալլու: Այս նիւթերը անսպասառ լուծուած պէտք է լինեն հայի չըի մէջ, տպաթէ ոչ չեն կարող մտնել արմատի միջով: Ոսքտ այս դրօթեամբ թափանցում են արմատի մէջ ծառալճամբ և աղա մազուկրութեամբ և տերենների զրգումամբ հատնում են նաքա բարսի ամենավերին ծայրը:

Աերալիշեալ անզոցնիուոր մարմինները լուծուած ջրի մէջ հասնելով բայրի կանաչ մասերին, գլխաւորապէս տերեններին, արեղատի և բարեխառնալիքներն աղգեցութեան ներքաւ

և ներկայութեամբ ածխաթթուալին գազի, որ այդ միջոցին տերեւները խռակների միջով օգիք սպառում են, փոխարկվում են այլ մարմիններ — գործիաւոր նիւթեր, որոց ապա բոյսը է-բացնո՞մ է, պէտք ածելով նոցա իւր աճման և այլ կենսական պիտոյից համար:

Բոյսերի այս կերպիւ կերակրուելու եղանակը, այսինքն ընդունել հողից անգործիաւոր նիւթեր և նոցա գործիաւոր փոխարկելը, այնքան յատուկ է նոցա կեանքի պայմաններին՝ որ մինչև վերջին ժամանակ այլապէս նոցա կերակրուելու մասին ենթադրութիւնը համարվում էր սոսկ նախապաշարմունք և տգիտութիւն ենթադրողի կողմից։ Սակայն այս վերջին ժամանակս բոյսերի և՝ գործիաւոր նիւթերով մննդառութիւնը բաւական ընդհանրացած և ապացուցած փաստ է դարձած, շնորհիւ երևելի գիտնական Դարվինի նուրբ և հետաքրքիր հետազոտութիւնների և մենք մեզ պարտք ենք համարում վեժ՝ համառոտակի գաղափար տալ դորա մասին «Վարժարանի» ուսումնատենչ ընթերցողին, լինուելով լիշեալ երևելի գիտնականի հետազոտութիւնների վերայ:

Դեռ անցեալ դարում գիտնականները նկատած էին՝ որ մի քանի բոյսերի տերեւներ ունին զրգութելու յատկաւթիւն, որով նոքա որոնում են ճանձեր և որսալու ժամանակ սաստիկ հուպ են տալիս։ Բայց թէ բնութեան մէջ նոցա որսալու այդ յատկաւթիւնը ինչ նշանակութիւն ունի, նոքա դրժուարանում էին բացատրել և երբ և իցէ նոցա բացատրութիւնը նոքա անկարսող էին համարում։ 1768 թուին բնագէտ Ելիսը մանսաւանդ ուշագրութիւն գարձրեց այդ տեսակ բոյսի վերայ, հաղորդելով իւր գիտողութիւնները երեւելի գիտնական Լիննէին նա սասում էր որ, եթէ տերեւի վերին երեսը կազմուած է միջատ որսալու համար, կնշանակէ թէ բնութիւնը աչքի առաջ ունէր բոյսի սննդառութեան կերպը. սակայն անկարսկած, աւելացնում է նա, բոյսը չէ զանազանում կենդանուն բոյսից կտու հանքից, որով հետև նորա տերեւը անխտիր որսում է թէ ծիղ, թէ ասեղ և թէ միջատ, երբ նորան այս նիւթերը մօտեցնում ենք։ Վերջին հետազոտութիւններից՝ որ մենք այստեղ առաջ կբերենք ակ-

ներեւ կլինի թէ ինչ զանազանութեամբ կատարվում է այդ երկու տեսակ անշունչ և շնչաւը նիւթերի որսալու եղանակը և թէ իւրաքանչիւրը նոցանից որքան բոլորի կեանքին համապատասխան գործողութեամբ է լինում:

Միջատներով կերակրով բայսերից նշանաւոր են Դրօներն (Drosera) և ձանճահալը (Dionaea). այս երկու բոյսի վերաբերութեամբ գլխաւորապէս եղած են զանազանակերպ փորձեր և հետազօտութիւններ և մենք էլ այս անգամ կզբացուենք այդ բոյսերի «մսակեր» յատկութիւններով:


Այս յօդուածը գլելիս օգուտ ենք քաղել Կուկի Բոյսերի կեանքի նշանաւոր երեսովներ վերնազրով գրքից:

## Ա.

Նատ տարի առաջ Դրօներա բոյսը հագուազիւտ էր, որովհետեւ շատ տեղ չէր բուսնում և ինքը իւր վերալ առանձին ուշադրութիւն չէր դարձնում, բացի իւր գեղեցիկ ծաղիկներից, տերևների վերայ ցըուած փայլիւն մսանքներից և նոցա վերայ գանւազ սատկած միջատներից: Այս բոյսը այնքան փոքր է որ պէտք է մեծ ուշադրութեամբ որոնել նորան մամուռի մէջ խոնաւ տեղերում, որ նա շատ է սիրում: Կովկասի ոչ մի տեղում գտած չեն այդ բոյսը, հարաւալին Եւրոպայի շատ տեղերում նա բուսնում է: Նորա տերևները շապկի կոճակներից մեծ չեն և հազիւ կէս դիւմից աւելի են լինում: Սոքա իւրեանց ստորին կողմով կպած են երկայն ու բարակ կանթերից: Այս կանթերը դասաւորուած են ճառագայթածեւ և դուրս գալով տակուքից աստղածե փրուած են գետնի երեսին: Տերևների մէջից բարձրանում է ծաղկաբեր ծիղ չորսից մինչև հինգ դիւմ բարձրութեամբ տանելով իւր ծալիքն մի քանի փոքրիկ ծաղիկներ: Տերևները և տերևալին կանթերի ծալերը ծածկուած են նշանաւոր մագերով կամ շոշափելիքներով, որոնք կծիկի

պէս են վերջանում, այդ կծիկները արևի տակ փայլում են կարծես թէ նոցա վերայ ցողի կաթիլներ լինին մնացած: Այդ տերեները և սորա այդ նշանաւոր մասերը արժանի են ուշադրութեան եթէ ուղենանք իմանալ թէ ինչ պատճառաւ Դրօներան կոչվում է «մսակեր» բոյս:

Այս բոյսի տերեները վեցեց աւելի հազիւ են լինում.



Բալաբակատերեւ Դրօներայի տերեւը մհ ծացըած:

բայց առ հասարակ նոցա թիւը պակաս է. նոցա վերին երեսը ծածկուած է մսանուտ մազերսվ, որոնք «շոշափելիքներ» են կոչվում: Այդ տեսակ շոշափելիքներ տերեւի վերայ լինում է 100-ից մինչև 250 հատ: Տերեւի մէջ տեղում գալնող շոշափելիքները ամենակարճ են և ցցուած են ուղղահայեաց. բայց դոքա քանի որ մօտենում են տերեւի ափերին աւելի երկար են դառնուած և աւելի թէք դրութիւն են ստանուած: Ամէն մի շոշափելիք ունի թելաձև ծիղ և ծալրին լայնացած երկայնաձև մսանք: Այս մսանքը միշտ շաղախուած է մածուցիկ հեղանիւթով, որից իսկ կախուած է նորա ցողանման փայլը: Եթէ կտրենք մի այդպիսի մսանք, կտեսնենք որ նա բաղկացած է արտաքին շերթից կազմուած բազմակուսի խորշերից, որոնք շատ փոքր են և լքցուած են ծիրանագոյն հատիկներով: Այդ շերթի տակ կայ մի այլ շերթ կազմուած ուրիշ ձեի խորշերից բայց լքցուած է նոյն հատիկաւոր նիւթով: Իսկ մսանքի մէջ տեղում գտնվում է մի խուրձ գլանաձև խորշերի, որոնք պարունակում են ոլորտա-

ձեւ թելիկ և թափանցիկ հեղանիւթ: Այս տեղեց իջնում է մի ոլորտածեւ անօթ դէպի ծղի մէջ տեղը, որի վերայ նըստած է մսանքը: Շոշափելիքների արանքներում կամ տերևի այն տեղերում, ուր շոշափելիքներ չկան, դուրս են ցցուած չզարգացած մազիկնել:

Եթէ շոշափելիքի վերալ դնենք մի փոքրիկ առարկայ, նա սկսում է շարժուիլ: Այդ առարկայի տպաւորութիւնը այն շոշափելիքից՝ որին առարկան ազգեց, անցնում է միւսներին բոլոր չորս կողմը այնպէս որ շոշափելիքները միմեանց ետևից թեքվում են տերևի մէջ տեղի կողմ իբրև թէ կամենում են շրջապատել իրանց գրգռող առարկայ: Եթէ շոշափելիքը զրգուող առարկան կենդանի է, այն դէպքում մեռեալ առարկայից նա շուտով և ամուր է շրջապատվում: Թէ որքան ժամանակում բոլոր շոշափելիքները կարող են միմեանց մօտենալ գժուար է իմանալ, որովհետեւ այդ ժամանակը լինում է զանազան և կախուած է հանգամանքներից: Միայն յալտնի է որ ժամանակը կարճ է իբրև միջատը փափկամարմին է, երկար է—երբ նա կոշտամարմին է: Բայց առ հասարակ առարկան շոշափելիքներով շրջապատելու համար անցնում է չորսից մինչև հինգ ժամ ժամանակ: Եթք մսանքներին միայն մօտեցնել մազ կամ թել վրէն ոչինչ չը թողներով, նոքա որոնք տերևի տփերին են՝ թեքվում են դէպի ներքին կողմ: սոցա այս շարժուութիւնը կարելի է առաջացնել երեք կամ չորս տնգամ մսանքներին ձեռք տալով, տասը ճրոպէից յետոյ արդէն նոքա կսկսեն շարժուիլ:

Եթք այդ տեսակ շարժողութեամբ բռնվում է միջատը, յայտնվում է մի նոր երեոյթ որ քննել է Դարվինը և որի մասին ասում է հետեւեալ՝ «Եթէ որեւիցէ առարկայ՝ մսի կտոր կամ միջատ դնել տերևի թիթեղի վերալ, շոշափելիքների թեքուելուց յետոյ մսանքներից սկսում է արտահոսել մեծ քանակութեամբ հեղանիւթ»: Այս երեոյթը նշանաւոր է նորանով որ շոշափելիքների թեքուելու և մսանքներից հեղանիւթ արտահոսելու մէջ կայ մի տեսակ կապ: Բայց կայ էլի մի ուրիշ երեոյթ, որ մեծ կապ ունի վերոյիշեալի չետ: Այս այն է որ շոշափելիքներից ոչ թէ միայն արտա-

Հոսում է մեծ քանակութեամբ հեղանիւթ, այլ թէ այդ հեղանիւթը նաև փոխում է իւր յատկսւթիւնը՝ դառնալով աւելի թժու։ Հեղանիւթի թժուանալը կատարվում է առաջ քան թէ մսանքները առարկային կմօտենան և այդ շարունակվում է բոլոր ժամանակ քանի որ շոշափելիքները թեքուած են և մեծ քանակութեամբ արտահոսում են մածուցիկ հեղանիւթ։ Սորա հետ հարկաւոր է յիշել և այն որ մսի կառը և այլ առարկաներ որոնք այդ միջոցին գտընվում են տերեւի վերայ և ենթարկուած են հեղանիւթի ներգործութեանը, մնում են մաքուր և չեն փթում, մինչ զի նոյն տեսակ և նոյն մեծութեան առարկաները՝ միևնույն ժամանակ դրուած մամուռի վերայ բորբոսնում են, նեխվում և լքցվում ջրածիններով — թուլատարբներով (ինֆուզօրիա)։ Այս երեսյթը ցոյց է տալիս որ թժու հեղանիւթի մէջ պարունակուած է մի տեսակ պահպանողական յատկութիւն։

Դատ դիտողութիւնները ցոյց են տալիս որ միջատների մեծ բազմութիւն սատկում է բռնվելուց մի քաւորդ ժամից յետոյ։ Միջատները շունչ են առնում շնչողական խողովակներով կամ խոչակներով, որոնք բացվում են նոցամարմնի վերայ։ Մսանքների հեղանիւթը ծեփում ու խցում է այդ խուզակները և միջատը սատկում է խեղդուելուց։ Հետզհետէ քանի որ հարեան մսանքները թեքվում են միջատի վերայ, այնքան ևս արտահոսող հեղանիւթի քանակութիւնը աւելանում է. միջատը սմբողջապէս հեղեղվում է այդ հեղանիւթով և այսպէս նա խեղդվում է։ Նոր բռնուած միջատի խլալսոցը հարուած է պատճառում միւս շոշափելիքներին և սոքա զրգոււելով մեծ քանակութեամբ արտահոսում են հեղանիւթ, ուստի միջատի մահը դորանով միայն արագանում է։

Փորձը հասատուց որ թեքուած մսանքից արտահոսող թժու հեղանիւթը օգնում է բոլոխն կերակրուելու կենդանական կերակրով։ Ալլապէս հասկանալի չեր լինի այդ բոլոր երեսյթների նալատակը։ Խօնչու համար շոշափելիքները զգում կամ զրգլուվում են երբ նոցա դիպչում ևս, ի՞նչու սոքա թեքվում են տերեւի վերայ դրուած առարկայի վերայ,

արտահոսում են մեծ քանակութեամբ մածուցիկ հեղանիւթոր թթու յատկութիւն է ստանում. անշուշտ այս բոլոր երեսիթները առանց նպատակի չեւ և այդ նպատակը կայտնում է նորանում որ բռնեն կենդանական կերակուր, մարսեն նորան և ամենեւին իւրացնեն:

Կասկած չկայ որ տերեւի մսանքները նաև ունին կլանելու յատկութիւն: Այս բանը կարելի է հաստատել եթէ նոցա վերայ գնել մի փոքրիկ կտոր այն տեսակ առարկայից որպիսին է ածխաթթուալին ամմոնի, որի կլանելուց փոխվում է մսանքի գոյնը, որ կնշանակէ թէ ամմոնին մսանքի բաղադրութեան վերայ ունեցաւ իւր ազգեցութիւնը: Նոյնը կարելի է ենթադրել եթէ գնել նոցա վերայ այնպիսի նիւթեր, որոնք պարունակում են իւրեանց մէջ բորակածնի լուծանելի մասեր. այս գէպքում շոշափելիքները մնում են նոցա վերայ թեքուած աւելի երկար ժամանակ, քան այնպիսի նիւթերի վերայ, որոնք այդ մասերը իւրեանց մէջ չեն պարունակում:

Դրօգերա բոյսի տրմատները շատ մտնը են. նոքա միայն նոցա հարկաւոր նոմութիւնը ընդունելու համար են: Դարձինը ասում է՝ «Դրօգերան՝ գէպի ներքին կողմ տերեների ծալուած ափերով որ նման է ժամանակաւոր ստամոքսին, ամուր թեքուած շոշափելիքների մտանքներով որ արտահոսում են թթու հեղանիւթ և այս վերջինը լուծում է կենդանական նիւթեր յետոյ կլոնելու համար, կարելի է ընդունել թէ նա կերակրվում է նոյնպէս ինչպէս և կենդանին: Բայց նա այլապէս է խմում քան թէ կենդանին, այսինքն իւր արմատներով. նա շատ սլէտք է խմէ որ մտանքների շուրջը միշտ դանուին մտծուցիկ կաթիլներ, որոնց թիւը երբեմն հասնում է մինչև 260 հատ և սոքա ամբողջ տարուայ ընթացքում մնում են կիզող արեգակի տակ»:

Այսպէս մենք նկարագրեցինք այդ փոքրիկ բոյսի տերեները, որոնք միջատներ որաալու զործիք են ներկայացնում և միենոյն ժամանակ կազմում են մի տեսակ տամոքս, որի մէջ մարսովում է կենդանական կերակուրը: Ապա-

ցուցանել թէ այս ենթագրութիւն չէ, այլ իբողութիւն է՝ դիւրին և քննելով հետեւալ մանրամասնութիւնները:

Մանուս մազերով ծածկուած տերեւը տարօրինակ բան չէ ներկայացնում, բայց երբ այդ մազերը կամ շօշափելիքները կարողանում են որոշ ուղղութեամբ շարժուիլ, համաձայնելով այդ նոցագրուող պատճառին, այս դէպքում այդ տեսակ տերեւը ըստսերի կեանքի մէջ չէ կազմում սովորական երեսոյթ և մենք բնականաբար ցանկանում ենք իմանալ թէ Քնչ է այդ երեսոյթի պատճառը: Մենք տեսանք որ այդ շոշափելիքները յատկութիւնը ունին գրգռուելու և թեքուելու տերեւի միջին կողմ, երբ այդտեղ դրուած է որ և է առարկայ: Գրգռուելու այդ յատկութիւնը հետզհետէ անցնում է հարեան և հեռու գտնուած շօշափելիքներին: Սակայն եթէ երեք չորս անգամ միմեանց ետեսից ձեռք տալ շոշափելիքին, նա այլ ևս չի թեքուիլ, թէւ մոծակի թաթով շարունակ հարուած զգալով արդէն շարժվում է: Թեքուած շոշափելիքը մի յախնի ժամանակից յետոյ կամաց կտմաց ստանում է իւր նախկին ուղիղ գրութիւնը: Շոշափելիքը գտնում է իւր նախկին գրութեանը աւելի շուտ երբ նա գրգռուած է անգործիաւոր նիւթից, և դանդաղ է կատարում այդ, երբ նա գրոգրուած է փոքրիկ միջատից կամ մի կտոր մտից:

Ենթագրենք թէ միջատը ընկաւ կամ նստեց մի կամ մի քանի սրտագին շոշափելիքների վերայ. տասը վայրկեանից յետոյ նա կհասնի տերեւի մէջ տեղը, դէպի ուր կթեքուին և արջակայ շոշափելիքները և ի վերջոյ տանենեին կծածկեն միջտտին: Կարելի է հարցնել թէ արդեօք միջատը չի վախենալ կամ չի թռչիլ երբ կսկեն շօշափելիքները թեքուիլ դէպի տերեւի ներքին կողմը: Այս ենթագրութիւնը կարելի կլինէր եթէ մսանքները ծածկուած չլինէին մածուցիկ հեղանիւթով, որ, ինչպէս յախնի է, աւելի մեծ քանակութեամբ սկսում են արտահոսել քանի շոշափելիքները թեքում են դէպի տերեւի ներքին կողմը: Այդ հեղանիւթը այնքան թանձր է որ թելերի պէս է ծորում. ուստի եթէ միջատը ընկնի նորա մէջ, նա այլևս աղատուելու հնար չունի:

Շոշափելիքները ոչ թէ միայն յիշեցնում են մեզ կենդա-

նիների զգացողութիւնը իւրեանց գրգռուելու յատկութեամբ, այլ և զարմացնում են մեզ. իւրեանց ընդունակութեամբ զանազանելու և այն առիթը որ գրգիռ է նոցա պատճառում: Ապացուցած փաստ է որ նոցա այդ ընդունակութիւնը յայտնի է լինում ոչ թէ միայն գործիաւոր նիւթը՝ անգործիաւոր նիւթից զազանելում, այսինքն ապակու կտորը՝ եփած մսի կտորից, այլ և—կոշտամարմին բգէզը՝ փափկամարմին մժեղից, նոյնպէս տեսակ տեսակ նիւթերի զանազանելու մէջ: Այսպէս արած են փորձեր մաքուր ջրի կաթիների վերաբերութեամբ 30—40 տերևների վերայ և ոչինչ ներգործութիւն չէ կատարուել: Փորձել են կաթի կաթիլներ տասնուվեց տերևի վերայ և միշտ նկատել են որ շոշափելիքները որոշ կերպիւ թեքուել են: Տասը հատ տերևի վերայ փորձել են սառը թէլի կաթիլների ներգործութիւնը և ամենայն ժամանակ առանց հետեանքի. այն ինչ երբ ութը՝ տերևի վերայ փորձել են ձկան սոսնձի բաղադրութիւնը՝ բոլոր տերևների շոշափելիքները թեքուել են: Ոչ պակաս նշանաւոր է նաև կոշտ նիւթերի ազդեցութիւնը նոցա վերայ: Դատ տերևների վերայ դարսել են փոքրիկ մժեղներ, մի քանիսի վերայ—թղթեայ գնդակներ, մամուռի և փետուրի կտորներ՝ մժեղի մեծութեամբ: Մժեղները մի քանի ժամից յետոյ ամուր փաթաթուել են շոշափելիքներով, մինչ զի դէպի միւս առարկաները ամբողջ օրուայ մէջ շոշափելիքներից շատ քիչ թիւ թեքուել է: Բայց երբ թղթի, մամուռի և փետուրի կտորները վերցրել են և սոցա տեղը նոյն տերևի վերայ դրել են հում մսի կտորներ՝ բոլոր շոշափելիքները կարճ ժամանակում արագ թեքուել են: Բայց սորանից նշանաւոր է նաև մի այլ երեսոյթ որ շատ փորձերից յետոյ նկատած են՝ թէ շոշափելիքները աւելի երկար ժամանակ մնում են թեքուած այնպիսի նիւթերի վերայ որոնք աւելի գիւրամարս են, քան թէ անմարսելի, ինչպէս որ են ապակու կամ թղթի կտորները: Սորանից կարելի է եզրակացնել որ բոլոր իմանում է որ վերջին նիւթերը անմարսելի են. ուստի շոշափելիքները յետ քաշուեցան և դարձան իւրեանց նախկին դրութեանը. այն ինչ դիւրամարս նիւթերի վերայ մնացին թեքուած և նոցա մարսե-

ցին։ Շոշափելվքները աւելի մեծ քանակութեամբ արտահասում են հեղանիւմ երբ թեքուած են լինում, քան թէ ուղիղ դրութեամբ կանգնած, այս վերջին վիճակին դառնալով նոքա ցամաքած կամ շատ մասնաւոր աստիճանի խոնաւացած են լինում և նորից խոնաւանում են միայն այն ժամանակ երբ բոլորվին ուղղվում են։ Առաջին դրութիւնը՝ այսինքն թաց դրութիւնը, նոցա հարկաւոր էր կերակուրը որսալու և մարսելու համար, երկրորդը՝ այսինքն ցամաք դրութիւնը—ազատուելու նոցա վերայ կպած սատկած միջատի թաթերից և թեերից։

Ահա այսպէս է կատարելագործուած Դրօգերան իւր որպալու եղանակով և կերակուր զանազանելու ընդունակութեամբ։ Խոչ է անում այժմ այդ կերակուրի հետ։ Յայտնի է որ կենդանու ստամոքսային հիւթը բաղկացած է թթւուտից և ֆերմենտից, որոնք մարսողութեան համար միակերպ հարկաւոր են։ Նոյնը նկատած են Դրօգերայի արտաթորած հիւթի մէջ։ Երբ կենդանու ստամոքսը մեքենայտբար դրդուվում է, նա արտաթորում է թթւուտա։ Եթէ Դրօգերայի մոանքների վերայ դնել տպակու և այլ առարկաների կտորներ՝ այդ և հարևան մոանքները, որոց ձեռք տուած չէր, մեծ քանակութեամբ արտահոսում են թթւու հեղանիւթի։ Հեղանիւթի թթւութիւնը իմանալու համար, գործ են ածում լակմուսի թուղթը\*). սորանով էլ փորձուած են Դրօգերայի մոանքներից արտահոսած հեղանիւթը։ Այս հեղանիւթը, ինչպէս արդէն լիշուած էր, ունի նաև նեխուելուն առաջն առնող յատկու-

\*.) Լակմուս պատրաստում են զանազան տեսակ լոսերից և մամուռներից, որոնք բուսնում են գետնի, քարերի և ծառերի կեղևի վերայ զիստորապէս Շվէդիայի, Նորվէգիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ափերի մօտ։ Լակմուս պատրաստելու համար յիշեալ բջսերը մանրացնում են, խառնում են մէզի, պօտասի և մարմարիօնի հետ և այսպիսով ստացած զանգուածը փոքր ժամանակ հանդիսաւ թողնելուց յետոց ստանում է կապշտ դոյն։ Յետոց այն զանգուածից մանր խորանարգներ կազմելով չորացնում են և ապա ուղարկում են ծախու. լակմուսի բաղադրութիւնը թթուներից կապոյտ դոյնից գառնում է կարմիր։

թիւն։ Աս չէ թողնում առարկան բորբոսնելու և նորա ներկայութեամբ չեն ծագում ջրածիններ և երկար ժամանակ այն առարկաները որոնք հեղեղուել են նորանով պահպանվում են գոյնը փոխուելուց և նեխուելուց։ Այս իւր յատկութեամբ էլ նա նման է կենդանիների ստամոքսային հիւթին, որ ինչպէս գիտենք, դադարեցնում է նեխուելուց նորա մէջ գտնուող առարկաները։ Եթէ ուրիշ ապացույցներ չլինէին այսքանս բաւական կլինէր համոզուելու Դրօգերայի կերակուր մարսելու ընդունակութեան մէջ։ Եթէ հաստատած է որ բոյսը ընդունակ է միջատներ որսալու և ըմբըռնելու, զանազանելու մարսելի և անմարսելի նիւթեր, եթէ Դրօգերայի տերենները արտահոսում են հեղանիւթ, որ ունի այն հիւթի բոյլոր յատկութիւններն որ լուծում է կերակուր և պահպանում է նորան նեխուելուց, ինչպէս որ այդ լինում է կենդանու ստամոքսի մէջ հասարակ մարսողութեան ժամանակ, ապա ուրեմն ամենայն իրաւամբ մենք կարող ենք այդ բոյսը «մսակեր» անուանել։

Կենդանիների ստամոքսային մարսողութեան և մսակեր բոյսերի տերեւի մէջ կատարուած մարսողութեան մէջ կատարեալ նմանութիւն կայ։ Տերեւը մարսում է նոյն նիւթեր բոլորովին և նոյն կերապով՝ ալիքնքն մարսվում են կենդանական նիւթի սպիտակուցի մասեր, նոյնպէս ինչպէս որ մենք այդ մարսում ենք։ Այս երկու գիպուածումն էլ կարեսը է որ մարսելի նիւթը շաղախուած լինի հեղանիւթով, որ թէ բոյսի և թէ կենդանու մէջ արտահոսում է միմայն մարսելի նիւթի ներկայութեամբ։ Ոչ ստամոքսը և ոչ տերեւը իզուր չեն արտահոսիլ հեղանիւթ եթէ նոցա մէջ գտնուած առարկան մարսելու համար ոլեաքական չէ։ Վերջապէս երկու այդ գիպուածքումն էլ արտահոսող հեղանիւթը ունի թթու յատկութիւն։ Ստամոքսի մէջ դա աղի թթվուտ է, բայց թէ ինչ տեսակ թթու է արտահոսում տերեւից—ճիշտ յայտնի չէ։

Այսպէս շատ փորձերից յետոյ իմացուեցաւ որ Դրօգերայի մտանքներից արտահոսող հեղանիւթը ամենեին լուծում է սպիտակուց, մկանուքներ, կրծուկ, ոսկորի թելաձև մասեր, ժէլատին, կազէին՝ այսինքն պինդ եփած ձուի մանրացրած

սպիտակուց, մայ կտորներ, ոչխարի ոտի կրծուկ, թռչունի ոսկորի մանր կտորներ և ոչխարի կոտլէտի սակորներ: Այս վել ջինները այնքան են փափկանում, որ նոցա միջով հեշտ է անցիենում քորոշի բժացած ծալը և հեշտ է լինում նոցա հուալ տալ: Առ հասարակ այս բոլոր նիւթերը լուծվում են այնովէս ինչպէս բարձր կենդանիների ստամոքսի մէջ:

Այժմ մնացել է քննել կայ արդեօք որ և է նմանութիւն կենդանիների և բոյսերի մէջ նիւթեր կլանելու և իւրացնելու վերաբերմամբ: Նախ և առաջ հարկաւոր է համագուիլ այն բանի մէջ թէ մսանքները լուծելով նիւթեր՝ ունին արդեօք յետոյ նոցա կլանելու յատկութիւն: Եթէ այսպիսով կարելի լինէր ապացուցանել որ նոքա ընդունակ են դըլխաւորապէս բորակածնային հեղանիւթեր կլանելուն, դժուար չէր լինէլ ենթադրել որ նոքա կարող են ընդունել իւրեանց մէջ և կենդանական նիւթեր: Սորա համար արած են շատ հետաքրքիր և նուրբ փորձեր. մանաւանդ այդ արած է Դարվինը, և այդ բոլոր փորձերից յետոյ ամենայն իրաւամբ կարելի է յատկացնել այդ բոյսին «մսակեր» անունը:

Կենդանի բոյսերի տերւների վերայ կաթեցրել են քիմիական բաղադրութիւններ՝ այն է ամմոնիի աղերի բաղադրութիւն: Մի քանի մսանքներ իսկոյն կորչըրել են իւրեանց գոյն, բայց բոլոր աղերը այն ազդեցութիւն են ունեցել շոշափելիքների վերայ որ նոքա թեքուել են: Աղերը գործ են ածել անոսրացած և մի ցորենաչափ միլիոն մասից պակաս էլ բաւական էր շոշափելիքին ծծելու որ սա թեքուէր: Յիշեալ փորձերը կատարուել են երեք կերպով՝ մի քանի կաթելներ թափել են տերեկի թիթեղի վերայ, միւսները — ամենամանրեր — զգուշութեամբ ածել են արտաքին շոշափելիքների վերայ. վերջապէս երրորդ դէպլում՝ տերեկը ամբողջապէս կտրել են և ընկղմել են բաղադրութեան մէջ. հետևանքը ամենայն անդամ միւսոյնն է եղել:

Արած են փորձեր նոյնպէս շատ տեսակ աղերի, թթուների և ալկոօլիդների բաղադրութեանց հետ և մի քանի դիպուածում անսպասելի հետևանքի են հասել: Այսպէս օրինակի համար, մի քանի նիւթեր որ անվնաս են կենդա-

նիների համար, թունաւոր են եղել բոյսերի համար, իսկ միւսները որ ամենեին թունաւոր են կենդանիների համար համարեա անվնաս են Դրօգերալի համար։ Այս բոլոր փորձերից երեւեցաւ որ մասնքները ծծում են հիւթեր և սոցա ազդեցութիւնը անցնում է շոշափելիքներին, որոնց ձեռք տուած չէին։ Այսպէս՝ օրինակի համար, երբ բոյսը թունաւորվում էր վնասակար նիւթը կլանելուց, նորա մասերը սեանում էին և նորա վերայ երեւում էին թունաւորուելու բոլոր նշանները։ Այս փորձերից ճիշդ իմացվում է բոյսերի կլանելու յատկութիւնը, որովհետեւ երբ վնասակար նիւթը կլանվում է՝ պարզ նկատվում է նորա ներգործութիւնը բոյսի վերայ, այն ինչ բոյսին օգտակար և միանգամայն չեզոք նիւթերի կլանուելուց նոյնչափ որոշ հետեւանքներ չեն նշմարվում։

Կայ մի նշանաւոր գէպք, երբ շոշափելիքը յայտնապէս մասնակցում է այդ դործի մէջ։ Հարկաւոր է այդ էլ լիշել որպիհետեւ այս գէպքում շոշափելիքի ներքին կտզմութեան մէջ գրգռուելուց մեծ փոփոխութիւններ են լինում։ Եթէ քննենք շոշափելիքը, երբ սա չէ գրգռուած կամ թէք դրութեան չէ եկած, կնկատենք որ նորա ծիրը կազմող խորշերը բոլորեքեանք միատեսակ են և լի են միատեսակ ծիրանագոյն հեղանիւթով և թէ իւրաքանչիւր խորշի պատի երկայնութեամբ կայ անգոյն շըջող հեղանիւթի մի բարակ շերժ։ Պունաւոր հեղանիւթով խորշերը տալիս են ծղին իւրեանց ոեպհական գոյն։ Բայց երբ քննենք շոշափելիքը որ և է պատճառից գրգռուելուց յետով, այն ժամանակ խորշերը այլապէս են ներկայանում։ Պարզ աչքով էլ նկատելի է լինում, որ նոքա ուրիշ տեսակ են դարձել և թէ ամբողջապէս ծիրանագոյն չեն, այլ բժաւոր։ Այս բանը կտրելի է նկատել խոշորացոյցի տակ, որպա պատճառը կախուած է նորանից որ ծիրանագոյն խորշերի նիւթը կուտակվում է անգոյն վարիք, մէջ աեսակ տեսակ զանգուածներով։ Այն խորշը, որ առաջ մի գոյն ունէր, այժմ իւրեան մէջ պարունակում է թափանցիկ անգոյն հեղանիւթ որի մէջ լող է տալիս կուտակուած գունաւոր նիւթը։ Այս կուտակուած զանգուածը երբեմն մի, երբեմն երկու դիպուածում, միշտ փոխում

Ե իւր ձեւ՝ դանդաղ և կամացուկ, այն կենդանիների պէս որոնք գտնվում են կանգնած ջրերի մէջ և որոնք կոչվում են ամերա: Յետոյ դադարում է շարժողութիւնը՝ զանդուածները նորից լուծվում են և վրիժում են խորշերի ներքին վայրում և այդպիսով ստանում են միատեսակ գոլն: Ինչ բան էլ որ թեքէր շոշափելիքը զանգուածի կուտակումը խորշերի մէջ անփոփոխ է կատարվում. բայց երբ գրգռման պատճառը հեռանում է և ստանում իւր նախկին ուղիղ դրութիւնը— խորշերի բովանդակութիւնը դարձեալ միատեսակ է դառնում և ամենայն տեղ նա լինում է միատեսակ թանձրութեամբ:

Կուտակումը սկսվում է ծղի վերին ծայրից անմիջապէս մսանքի մօտ և հետզհետէ իջնում է: Սորա հետ շոշափելիքը թեքվում է, բայց կուտակումն ինքն երբէք պատճառ չէ նորա թեքուելուն: Այս բանը ապացոյց է նորան, որ կուտակումը կարող է կատարուիլ և այն ժամանակ երբ շոշափելիքը չէ թեքուած: Նոյնպէս մի քանի թթուներ թէն թեքում են շոշափելիք, բայց նորա մէջ կուտակումը չէ կատարվում: Ուրեմն կուտակումը չի կարելի համարել ոչ թեքուելու պատճառ և ոչ նորա հետեւանք: Ինչ պատճառից էլ չառաջանայ կուտակումը նա միշտ կապ ունի մսանքից հեղանիւթի արտահոսելու քանակութեան հետ, իսկ զանդուածների անհետանալը իւր կարգով ցոյց է տալիս մսանքներից հոսող հեղանիւթի պակասիլը: Այս տեսակ երեսոյթը նկատելի է նաև կարճ շոշափելիքների մէջ, որոնք գտնվում են տերեւի մէջ տեղում և որոնք ունին կանաչ ծղեր, միայն այն զանազանութեամբ որ կուտակուած զանգուածներն ունին նոյն կանաչ գոլն որ ունին նոյն իսկ խորշերը: Այս երեսոյթը ցոյց է տալիս թէ կուտակուած զանգուածի գոլնը կախուած է խորշերի բաղադրութեան գոյնից:

Դարվինի երկասիրութեան մէջ բոլոր փաստերը, որ առաջ են եկած դիտողութիւններից և փորձերից, հաստատում են նորա այն տեսութիւնը թէ միջատներ որսալու և նոցամարսելու գործողութիւնը կատարվում է նոյն իսկ բոլոր օգուտի համար: Մի քանի բուսաբաններ ժխտում էին նորա տեսութեան ապացոյցները, բայց հեղինակի որդին՝ Ֆրանսիս

Դարվինը մի քանի փորձելով բացատրեց թէ Վրօգերայի մսակեր լատկութիւնը ինչ ազդեցութիւն ունի նորա բարեկեցութեան վերայ: Նա փորձի համար վերառած մի քանի բոյսեր բաժանեց այնպէս որ նոցա կէսը այն է 91 հատ բոյս ոչինչ բանով չէր կերակրում, միւսները՝ 89 հատ բոյս կերակրում էր խորոված մսով որ կարառել էր բարակ շերթերով առիշեղ թելերին և յետոյ զզգզել էր նոցա մանր թելիկներ: Առաջին զանազանութիւնը երեացել էր 0զոստոս ամսին՝ առանց սնունդի թուզած բոյսերը տուել էին միայն 116 ծաղկաբեր ծիղ, իսկ սնունդ ստացողները — 173 հատ այդ տեսակ ծիղ: Միւս զանազանութիւնը նորա մէջ էր կայանում որ սնունդ ստացած բոյսերը ունէին աւելի առողջ տերեւներ, քան թէ առանց սնունդի թուզած բոյսերը: Վերջապէս յայտնի եղաւ որ տերեւներին բորբակածնի կերակուր տալուց յետոյ բոյսը աւելի առատ պտուղներ է բերում: Նոյն տեսակ փորձեր արած են և Գերմանիայում, ուր մոի տեղ բոյսերին տուած են հողալին ոչիլներ և հասել են այն եղբակացութեանը, որ բոյսը այդ միջատներով սնունդ առնելիս սկզբամեծ օդուաներ և առաւելութիւններ է ձեռք բերում, քան ուղիշները:

(Աղ շարունակուի)  
Ա. ՔԻՇՄԻՇԵԽՆԱՑ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԻՃԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Մի Հօր յիշապակարանից.)

Երե մի վիճակ ընտրելու առ հասարակ դժուար բան է, առառել եւս դժուար է յասլապէս որդու համար վիճակ ընտրելոց: Հին մարդիկ այդ դժուարութեամ հետ ծանօթ չեն: առաջ որդին ոչ քեւ միայն ծառանգում էր հօրը, այլ եւ շարունակում էր նորա պաշտօնը: Կալուածատէրի որդին պահպանում էր Ֆերման, նօտարի որդին—գրաստենեակը, բժշկի որդին—հիւանդանոցը, վաճառականի որդին—խանուրը, արմեստառորդի որդին—զործառունը, դատաւորական արոռոջ, պրօքեսօրի որդին—ամբիոնը, զինուորի որդին—սուրբ, քահանայի որդին—Ֆերեջան: Առաջ սովորութիւն էր ասել և օր եւ որ դու տու ն, եւ այդ խօսքերով արտապատվում էր ներկայի եւ անցեալի մեջ եղած կապը. առանդուրեան եւ յառաջադիմուրեան մեջ եղած միուրեան յօդը: Հօր փորձառութիւնը դրամագիսի արմէր ունի ք որդու համար. նորա ազնիւ անցեալը, պատուառոր կեանքը զուտ դրամի տեղ էր բռնում տան մեջ եւ կազմում էր մի տեսակ անսոնմիկ ազնուականութիւն, որ տոհմիկից նուազ չէր. ամենահասարակ մարդիկն անզամ ունին իրանց նախնիքը, որոնց պարծանքով յիշում էին, մեծարում էին եւ շարունակում. մի խանուր անզամ կարող էր ունենալ իւր տոհմագրական ծառը—իւր ազնիւ անցեալը:

Այդպիսի բաներ չեն պատահում այժմ, երե ոչ բացառութեամբ: Խեր հօրը հաջորդող մի որդի՝ հազուազիւտ երեւոյր է այսօր: Շատ պատճառներից է յառաջ զայսի այդ փոփոխութիւնը: Ընդհանուր կկիրք դարձած փառասիրութիւն, անհաջուրեան սասափի սէր, արհամարհանք դէսի կոտարուող բաները եւ հաւատ դէսի այն ամենը, ինչ որ դեռ կատարաւելու. եւ, արագ ձեռք բերելու հարստուրեան հրապոյր, եխուրական բարեկեցուրեան տենչ եւ. վերջապէս ուսումնական, արմեստագիտական եւ առեւտրական զիւտերի անհուն եւ բազմադիմի յաճախութիւն, որոնք յաճիշարծ մարդիկային գրծուներեան համար նոր նոր ասպարեզներ բաց անելով, հանում են երիտասարդներին իրանց հայրերի status զիւ ՚ից եւ ձգում են մի նոր վիճակի մեջ,—անա փոփոխութեան զիսաւոր պատճառները: Որդիներն այսօր կարօւ են մի ուրիշ եւ աւելի գերազանց բան դառնաւ-

լու, քան որ հայրն է. Ես ով նորանշան երեւոյք—հայրերն էլ նոյնափի են վախենում իրանց յաջորդող տեսնելու որդիներին, որչափ որ որդիները վախենում են հօրը յաջորդելու:

Այդ բանը ես փարձով սուռագեցի:

Մի քանի տարի առաջ շնորհալի նեղինակներից մեկը բախտաւոր միտք ունեցաւ զործնական հրահանգների եւ բարոյական խրատների մի զիրք յօրինելու. Պաշտոն ո նա ցոյց անունով: Գրքի խրաբանջնոր գլուխը նուիրուած էր որոշ պաշտօնի քննութեան. ամեն մի պաշտօն նկարագրուած էր այդ պաշտօնի մեջ հողակուած մասնագետի ձեռքով: Մեղից ի նա յօդուածը գրել էր բժշկականութեան մեմարանի մի պրօմեսոր. աղջոկ և տ յօդուածը՝ մի մեծ փաստաբան. վարչութիւն յօդուածը՝ մի հիմն գաւառապետ, եւ այլն: Բայց ինչ դուքս եկաւ: Այն որ յիշեալ մասնագետներից ամեն մեկը, իւր կոչմանը յասուկ դժուարութիւններին եւ դառնուրիւններին քաջ տեղեակ յինելով, այնպէս ճարտար էր նկարագրում դորս վասնակներն եւ վեշտերը, որ պաշտոն ո նա ցոյց անուն կրող սուռար մատեանից տրամաբանորեն հետեւում էր, որ պէտք չէ ընտրել եւ ոչ մի պաշտօն:

Առեւցրեք նոյնափս եւ այս հետաքրքրելի հանգամանքը, որ յիշեալ յարձակուամները մի որոշ պաշտօնի դեմ այդ պաշտօնի համար տածուած սիրուց անբաժան էին: Նեղսիրտ մասնագետներից խրաբանջնորը երեկ հրափրուեր դարձեալ մի պաշտօն վնտրելու, հաւանական է որ իւր վարած պաշտօնը կը նուրեք. սակայն բնական է, որ ուրիշներին խորհուրդ տալիս մարդս խղճահարուի, իւր քաշած տանջանքների յիշատակով զգուշանայ եւ երեկ խրատելին որդին յինի, զգուշուրիւնը երկխաղի անցնի:

Այդ շինոր կերպով զիխս մեջ տարութերուող մտքերը յանկած պարզուեցան ինձ համար մի անցեալ դեպքի յիշատակով, որ ուզում եմ պատմել:

## 2.

Մի քանի տարի առաջ ես բարեկամ եի մի դրամատիքական նեղինակի հետ, որ դեռ առոյգ հասակում բռիլ էր բաժունը՝ իւր որդիների դաստիարակութեամբ զբաղուելու համար:

Մեր ժամանակի յատկանիշներից մեկն էլ այս է, որ հայրերը անձամբ մասնակցում են գասակների ուսմանը:

Ես կարող եմ անուանել մեր արդի մեծահամբաւ դրամատիքական նեղինակներից մեկին, որ իւր ամենափառաւոր յադրանակների միջոցին անգամ հնար գտաւ իւր կօմելիխաների մեջ դուրս բերուած շնորհալի անձինքների կողին ստեղծելու նա եւ մի զործ-

նական դեր, որ խաղում էր անձամբ նոյն հանձարով, ինչ հանձարով որ յօրինել էր զրաւոր դերերը: Նս իւր քեռորդու դաստիարակը հանդիսացաւ, ոչ թէ մի վերիմերոյ դաստիարակ, ոմի եւ ճաշակի ուսուցիչ—ոչ. այլ օրինաւոր վարժապետ: Նս ուսուցանում էր քեռորդուն խոնարհել, նոյնու եւ անօրինակ համբերութեամբ մտցնում էր նորա զիսի մէջ յունարէն եւ լատիներէն քերականութեան խիստ կանոնները եւ որովհետեւ ինքն մի բանասուեղծ էր, ուստի աշակերտ էր իւր ից մին դարձաւ:

Բայց այդպէս չեղաւ վերոյիշեալ բարեկամիս վիճակը: Զը նայելով իւր բոլոր ջաներին, իւր կրտսեր որդին մնաց մի բոյլ աշակերտ, իսկ աւագ որդին՝ մի անզիտան աշակերտ: Նորան յուսահատեցնում էր այդ աւագ որդին: Ոչ թէ ընդունակ չէր կամ անջնորհ էր այդ բշուառ: պատամին—բայ լիցի. նա ոչ բոյլ էր, ոչ էլ դմկամակ. երբեմն զգում էր մինչեւ անզամ խոնջ խայքեր եւ հառաջում էր ջարածար: Մի անզամ մայրը յուում է նորա յուսակտուր աշակերտը, թէ—մայրիկ, մայրիկ. օգն ի ի ն ճ ո ր ժ ա մ ա ն ա կ ն չ ը կ ո ր ց ն է մ.... Մայրը վազում է որդու մօտ եւ տեսնում է նորան արտասուրը աշքին բառզրի վրայ խոնարհած: — Խնչ է սկանանել: — Ես մեղաւոր չեմ, նեկելում է որդին, լացը սաստկացնելով, ես յանցաւոր չեմ... Որոնում էի բառարամիս մէջ venatio բառը եւ զիսայ ո ր ս, ես յետոյ... յետոյ... բարգմանելու փոխարէն՝ սկսայ մտածել որսի վրայ...

Այդ ընդլայրայած երեւակայութեան նետ միանում էր եւ մի պակասուրին, կարելի է ասել մի տարօրինակ հիւանդուրին. այսինքն որ պատամին թէ եւ զաղափարներ ու զգացումներ ուներ, բայց բառերով աղքատ էր բառերը նորա համար ասես. թէ հայելու միջից անցնող եւ անհետացող նույն պատկերներ լինեն. նորա աշքում բառերը որոշ եւ մտքի մէջ ամուր տապառուող ձեւեր չունեին, եւ նաև զատ դժուարանում էր ուղիղ զրելու նոցա: Երեւակայեցէր ուրեմն թէ ինչ տանջանք պիտի զգար այդ պատամին յունարէն կամ լատիներէն բառերի նետ գործ ունենալիս:

Խոսակցութեան ժամանակ նա դիմում էր միմիկայի օգնութեան եւ աւարտում էր ասելիքը զանազան շարժումներով. բայց երբ պէտք ունենար մի որ եւ է բնաբանի վրայ մի բանի տող զրելու եւ կամ մի երկու երես բան բարկմանելու, հուսումքը այլ եւս չէր զօրում բառերի պաշտօնը՝ կատարել, եւ չարաբախտը զիմնազիայի մէջ նստում էր յետին սեղելից յետինի վրայ... Մի օր մի շարադրուրին զրելուց յետոյ զիսիկոր զալիս է հօր մօտ: — Ո՞ր տեղը ստացար, հարցնում է հայրը: — Ոհ, ինձ մի անբախտուրին պատահեցաւ, ասում է որդին տրտում տրտում: Այսօր ես սովորականից լայ եի շարադրել, բայց երեւի թէ արտազրելիս մի նախադասուրին փախցրած

լինիմ: Այդ որ ջաւատամեր... ես վերջից երկրորդը կլին էի... Աշակերտի համեստ փառապիրութիւնը ներկայ զուանուող մի բարեկամի ծիծաղը շարժեց, բայց հայրը ծիծաղելոց ներու էր. նա զուշակութիւններ էր անուան: Մենք միշտ տասն տարիով առաջ ենք ապրում մեր զաւակներին վերաբերեալ գործերում. հոգս ենք քաշում նոց պատասեկուրեան մասին, եթե նորս դեռ. վեց տարեկան են. նոց երիտասարդուրեան մասին, մինչ նորս տականին տասնամետ են. նոց ապառնին արդեն ներկայ է մեզ համար յառաջ քան քեզ հասել էր այդ ապառնին:

Հայրը իւր կանխափոյր հոգածուրեամբ զաստիարակուրեան առեն տեսակ միջոցներ փորձեց որդու համար: Տարան նորան մի զիմազիմից միւսը, յանձնեց նորան մեկ վարժապետից միւսին, եւ վերջապէս այն տարօրինակ եզրափակուրեան հասաւ, որ քանի ուսումնական տարին յառաջ էր զնում, այնքան էլ զաւակնին բռյանում էր ուսման մէջ. վարժարան մտնելիս նա յետին աշակերտներից մէկն էր հանդիսանուած, իսկ բննուարիւններից յետոյ—ամենավեջինը, եւ խեղճ հայրը մոյորուած ասում էր ինքն իրան. Ի՞նչ անեն այժմ... ինչ կը դուրս գայ այս տառեսակից...

Սյու միջոցին էր որ կնոշ հիւանդուրեան պատճառով նա Բանիկը դը Լիւշօն հարկադրուեցաւ. Երբայ իւր գերդաստան նէտ: Սյու տեղ նա ծանօթացաւ. մի մարդու հէտ, որին Սլեքսանով Դիւխան (fills) զրեք հուզակել է: Դա էր դոկտոր Ֆ...: Արդարեւ մի հազորապիտ անձն, սիստմարիքական եւ վառ երեսակայուրեան տէր մի մարդ, այնպիսի տարօրինակ լեզուով խօսող, ինչպէս որ տարօրինակ էին եւ իւր գաղափարները, եւ ինքն իրան մի մարդարէ կարծող: Նա խենդի անուն էր հանել, բայց ներիք էր զեր մի երկու անգամ լույ նորան, որ տղիկի նորան ճարտար եւ նոզեռունչ մոքերից: Համարեցէր նորան մի զիշեր, որ յանկարծ լուսաւորիւում է վայլակով: Նա բաժանել էր մարդկային տիպերը զանազան դասակարգերի, ցեղերի, եւ պարձենուած էր քեզ նէնց առաջին հայեացրով կարող էր այնպէս կարդալ մարդիկների նողին, ինչպէս որ, օրինակի համար, նօւան է կարդուած մի մարտար երաժիշտ: Նա մի ակնարկով զուշակում էր մարդուս հոգեկան բերմունքը, մոքի յօժարութիւնը, տրամադրութիւնը: Միացրէր մի անձնասորուրեան մէջ Դալիմեն և աթասերին, առելցրէր ամեն զիտութիւններից բաղուած մի բառգիրը, որովհետեւ նա շատ զիտնական էր, եւ դուր կը ստանար այդ մարդուն:

Իմ բարեկամն տեսած էր նորան դեռ. Փարփառմ, ուստի հանդիպելով իրար Լիւշօնի մէջ նորս նէնց առաջին օրից բռնուեցան մասամբ յուրօ եւ մասամբ ծայրական խօսակցուրեան, որի ցնրացրում բարեկամն յարձակվում էր նորս ստամեսական սիստմի վրայ.

ոկտորբ մազի ջափ անգամ չեր զիջանում: Ես մինչ դեռ նորա այդպէս վիճաբանելով մաս եին զայխ մեմելիքի մեջ, անց է կենում աւագ որդին, այնքան վշտերի առարկան:—Պարեւու! ահա յա առիք ձեր զիտուքիւնը վարձելու համար, ասում է հայրը, մօտ կանցելով երիտասարդին եւ կանցնեցնելով դօկտորի առջեւ: Չեր ճանարդում այս տղային:—Ոչ, պատասխանում է դօկտորը. երբէք դորան չեմ տեսել: Ձեր որդիներից մէկն է:—Քանի տարեկան է:—Տասնինը: Դիտեցէր սորան եւ յայտնեցէր ձեր կարծիքը սորա մասին:—Ո՞հ, շնորհաւորում եմ, ասում է դօկտորը. զինեցիկ բնառորուքին,—շնորհայի հանձար:—Տեսան, ինչպէս սխալուեցաք, կանցեց բարեկամս, ծիծաղից բռյանալով... Ես ապա հեռացնելով որդուն, ասաց.—Գիտե՞ք արդեօք, որ այդ շնորհայի հանձարը Փարիզի բոլոր զիմնազիւների ամենայետին աջակերտն է:—Այդ ջատ պարզ բան է, ասում է դօկտորը ստունուրեամբ: Ես պաշտպանվում է: Դուք այնպիսի բաներ էք իրում նորա ուղեղի մեջ, որոնք նորան զարշելի են, եւ նա մերժում է նոցա, գոցում է իւր մտքի դուռը, պաշտպանվում է ծուլուրեամբ:—Խնձայիս քէ պաշտպանվում, եւ ում դիմ, ինչ բանի դիմ:—Ձեր դիմ, զիմնազիւնայի դիմ: Բանն այս է բարեկամ, որ երբ դուք երեխայի ստամորսին հակառակ մի ատելի սեռն էք տայխ նորան, նա դիմ է ծզում այդ սեռնդը. այդպէս է անում եւ ձեր որդին:—Շատ յուն. բայց ինչ անեմ դորա հետ, երբ դա բան տարեկան դառնայ... Խնձ կը դուրս զայ դորանից:—Այդ պատահին, ասաց դօկտորը հանգիստ ճայնով, մի նկարից է:—Նկարին:—Գուցէ եւ դրօշող:—Որ զանանտից էք տեսնում այդ բանը:—Ես տեսնում եմ:—Բայց նա ոչ մասիր է բռնել երբէք, ոչ էլ վրձին:—Դէ ուրեմն տուեք նորան եւ մատիր եւ վրձին: Ձեմ ասում քէ նա մի մեծ նկարից կը դառնայ... յա հասկացէր... քէ մինչեւ որ կետը կարող է հասնել մի արևեստագետ այդ զադանիք է... բայց նա չի դառնալ մի ուրիշ բան, երէ ոչ նըկարիչ...

Հայրը քէ եւ չը հաւատաց այդ մարգարեուքեան, բայց փոքր ինչ պաշարուեցաւ մտրով: Այդ մասին նա ոչինչ բան ջասաց որդուն, ջազատուեց նորան դարբուական պարապմունքներից, միայն քէ նկարչուրեան դասեր էլ աւելցրեց դոցա վրայ: Հետեւանք այն եղաւ, որ մի օր յունարենի եւ յատիներենի վարժապետը, հարցմունք ստունալով իւր աջակերտի յարաւու եւ օքսատօք սաստկացող բռյուրեան մասին, պատասխանեց. ինչ էք ուզում որ անեմ: Դեռ երեկ աջքի անցրի նորա տեսրակները, եւ ինչ տեսայ—չէ քէ միայն լուսանցրները, այլ եւ բոլոր եշերը նկարուած էին տեսարաններով, պատկերներով, ծրագիրներով. զրելու փոխանակ, նա նկարում է զրզով: Ես ոչինչ կարող չեմ անել այդ աջակերտի հետ... Սակայն հայրը դարձեալ վեց ամիս համբերեց եւ երբ պատահին 17 տարեկան

եղաւ. արի տեսնենք, ասաց նորան, ինչ ես ուզում դառնալ... Դը-  
ժուար չէր գուշակել, թէ ինչ պատախան տուաւ. որդին եւ ինչ՝  
հայրը: Հայրը կատարեսայ համաձայնուրին յայտնեց, որից յետոյ  
պատաճին ասաց իւր բրոց.—Ես զատ գոն եմ, որ հայրս բոլ է  
տախի ինձ նկարիչ դառնալու. պատճառ. որ երէ նա արգելեր  
անզամ, ես դարձեսայ նկարիչ կը դառնալի... Այս պատահական ցը-  
բուսուրեան խօսքերը լսելուն պէս, հայրը մօտեցաւ որդուն եւ ա-  
սաց.—Եկ համբուրքի ինձ. այդ խօսքերից աւելի համելի բան ես եր-  
բէր լսած չէի քեզնից... Եւ ահա այդ օրից սկսաւ երիտասարդի գե-  
ղարուեստական յուրջ զբաղմութքը. բայց նոյն միջոցին մի ուրիշ նորա-  
նան դեսպ էլ պատահեցաւ: Նկարչուրեան մէջ խորասուզուողը միայն  
որդին չէր: հապա հայրն էլ հարուեցաւ այդ բանին—ոչ իբրև արուես-  
տագուտ, այլ իբրև, նկարչուրեան բեմից նինելով, նաև բաւա-  
կան պարագ ժամանակ ուներ, եւ ահա այդ պարագն էր որ փու-  
րաց լրցնել իւր որդու զբաղմութքով: Այնուհետեւ նորա կեանքի  
առանցքը տեղից շարժուեցաւ, նորա փառասիրուրեան նպատակը  
փոխուեցաւ. նա իւր համար մի փոքրիկ զործ ստեղծեց որդու պաշ-  
տօնի մէջ: Պատմերները զքքեր դարձան նորա համար. քանզարան-  
ները զբաղարան: Առաջ նա տարին երեկ կամ չորս անգամ էր Լուվր  
զնում, այժմ սկսաւ ամեն շաբար յաձախիւ այնուեց: Նա սկսաւ ուսում-  
նասիրել այլ եւ այլ ժամանակների նկարչուրեան ոճերը, երեւելի նկա-  
րիչների կենսագրուրինը. բարեկամացաւ իւր ժամանակի առաջնա-  
կարգ արտիստների նետ, եւ այս բոլորը անուամ էր որդու արուեստին  
աւելի ցնուելանալու. մորով, որպէս զի պէտք եղած միջոցին կարող  
լինի մի օգոսակար խորհուրդ տալ որդուն, աւելի սերն կապ հաս-  
տատել իւր եւ որդու մէջ: Այնուհետեւ նա էլ չզիտէր ինչ է տա-  
դուուկ կամ դատարկուրին ասուած բանը: Նա երբէր այնպէս շա-  
նասէր եւ եռանդուս չէր զգացէր իրան, ինչպէս որ այն բավերց, երբ  
սկսէր էր աշխատել միայն որդու համար, ոչ իւր համար:

Երիտասարդին շնորհուած ազատուրեան մի ուրիշ անակրիսկան  
հետեւամբն էլ այն եղաւ, որ նա մի անզամ ազատուելով իրան  
զգուամբ ազդաղ բառերից, անզիք սերտելու դասերից, յիշողուրեան  
մէջ բանի մացնելու լատիներին եւ յունարին բեկորներից,— ճեռ-  
նամուխ եղաւ. միջու հօր աշխացուրեամբ հին աշխարհի ուսումնա-  
սիրուրեանը. նա մտաւ այդ աշխարհի մէջ արդարեւ, մի անձուկ  
դրնով; Թարգմանուրինը բանաստեղծուրեան նկատմանը նոյն է, ինչ  
որ փորազրուրինը նկարչուրեան նկատմամբ. երանզները կօքզում  
են նորս մէջ, բայց նկարն եւ յօրինուածը մնում էն: Թարգմանու-  
րեամբ առաջնորդուելով, երիտասարդը դիմեց, ուղիղ մեծ դիսցազ-  
ներգական եւ ողբերգական գրուածքների ոգուն եւ մտքին. տողո-

րուեցաւ նոցանով իբրևս նկարիչ. հայրն էլ, իբրևս միջնորդ, վերջուտին նորոգեց իւր ծանօթուրիւնը Համերսի, Պատունի, կարիեսի, Սօֆոկլեսի, Երիտիդեսի — այդ անմանական վարժապետների մեռ. նա կրկնեց իւր ուսումը եւ երկրոք միասին մի զեղեցիկ օրինակ հանդիսացան այն նոր եւ արդիւնաւոր իրադուրեան, որ կոչվում է փոխադարձ կրրուրիւն զաւակների՝ ճնողների ձեռքով եւ ճնողների զաւակների ձեռքով:

## 3.

Մնաւմ էր այժմ կրտսեր որդին: Նա էլ հասել էր արդեն այն հասակին, եթե անհրաժեշտ է լինում մի սրազ կոչում ընտրել: Նա գրեք փառաւոր կերպով ասարսել էր իւր ուսումը եւ մեծ յաջողութեամբ ստացել էր բակկալավրի (կանդիտոսի) դիպում, որից որ ասագ որդին զարդի էր մնացել նօր շնորհով ի մեծ զայրակդուրին ազգականների եւ բարեկամների: Նատ մարդիկների, եւ մինչեւ անգամ նշանաւոր մարդիկների աշքում բակկալավրուրեան դիպումի մի սուրբ բան է. նոցա կարծիքով բակկալավր չինելլ առանց մկրտութեան մնայուն հասաւոր է:

Երբ այդ մասին ծաղրում էին ասագ որդուն, հայրը ծիծառէլով պատասխան էր տալիս, թէ Ռատիայելն էլ բակկալավր չէր, բայց եւ այնպէս երեւելի նկարիչ դարձաւ: Սակայն բուրովին ուրիշ էր կրտսեր որդու դրսուրիւնը: Նա ուսել էր իրաւաբանուրիւն, եւ հայրը հարցրեց նրան:

Այժմ պէտք է, որ դու մտածես ապազայ վիճակիդ մասին: Դարձիր ինչ որ կամենաս՝ հօտար, փաստաբան, բժիշկ, արմեսուսագետ, վաճառական, միայն թէ ոչ չի նօ վ ն ի կ: Զինօվնիկը մեզանում չէ թէ միայն իւր զործի ստրուկն է — ամեն մարդ կեսանքի մեջ պարտական է կրել իւր զործի շոբան եւ վայ նորան, ով որ չէ կրում... բայց չինօվնիկի ապազան շատ կախուած է մինհասորի փոխուելուց, մեծառուրի համարյից, ինտրիգներից, մրցակիցներից, եւ կուզեիք, որ դու ինք լինեիր կեսանքիդ յարդարուղը եւ, ոչ որի չափակիներ, բայց թէ ինքը թէզ: — Միամիտ կաց, ասաց որդին. միքէ դու չաւանդեցիք ինձ աշխատուրեան սէր եւ անկախուրեան փափազ: — Ի՞նչ լսու, այժմ ինչ ես աւգում դառնան: — Դրամարիքական նեղինակ: — Ի՞նչ, պատասխանեց հայրը, վեր ցատկելով:

Տագմապով եւ վշտով լի էր այդ ի ն չ չ: Որդու իօրերց կենդանացրին նօր երեւակայուրեան մեջ այն բոլոր պատերազմները, այն բոլոր դատանուրիւններն ու ցաւերը, որոնք անբաժան են բարութական կեսանքից: Նա այնքան տպապանք էր տեսած այդ կեսանքի

մէջ, այնքան յուսահասուրեան եւ, մողեգնուրեան հառաջանք եր լսած... Ռատի եւ, շատ անկեղծ եր, այն զարմուրանքը որով նա բացականչեց.

— Դու կամենում ես դրամարիքական նեղինակ դառնան:

— Հօ դու, ել ես եղել, ասաց որդին. ուրեմն ինչո՞ւ չես կամենում, որ ես ել դառնայի:

— Հենց այն պատճառով որ եղել եմ եւ, դորա ինչ բան լինելը լա, զիտեմ:

— Ե՞նչ բան... բայց ինձ բառմ ի որ դու...

— Խօսրը իմ մասին չե. ես ազատուեցայ փարմանքից, ինչպէս որ կարացայ—ոչ լա, ոչ վաս: Սակայն թէ եւ, զոհ չը գնացի այդ կոչմանց, զոնեւ ուրիշների աղևուներին ականաւես եղայ, եւ այժմ ահա իբրեւ. վկայ եմ խօսում այդ սարսափելի կոչման մասին: Անփորձ մարդիկ եւ, մանաւանդ երիտասարդները միայն յաղթանակ տանող մի բանի երջանիկներին նայելով են դառնամ դորա մասին: Նորա չեն տեսնում պարտուածների բազմութիւնը: Մեկ յաղթողի դէմ հարիւր ջարդուածներ կարելի ե հաջուել, եւ, ինչ է սոցա վիճակը: Մի խառնուրդ ամենադառն կրրելի—վիրառորուած ինքնասիրութիւն, չը յազեցուած տենջանք, ջարունակ յուզուած նախանձ: Աստուած չսնէ որ ես ուրանամ այն բանը, ինչ որ պաշտէյ եմ մի օր: Այս, դրամարիքական արուեստը բոլոր միան արուեստներից գեղեցիկն է. բայց ես բայրից ամենասուկալին:

Դիցուք, պատասխանեց որդին գուարրերես. բայց եւ ամենից զուարձալին: Հասպա մի լիշիր անցեալի, հայրիկ... Դրամարիքական նեղինակ լինելը միքէ չէ նշանակում նախախնամուրեան եւ. բարի Աստուծոյ դեր խաղալ ամեն օր. միքէ չէ նշանակում սուեղծել կենդանի հակմեր, խօսեցնել նոցա, գործել տայ նոցա, ազդել նոցա նակատազրի վրայ, հարցստացնել եւ սնանկացնել նոցա, վարձառքէ եւ պատուհասել նոցա:

— Այդ բայրը շատ գեղեցիկ է անտարակոյս, ասաց նայրը. բայց ֆրազները բողած, լրջօրեն խօսենք:

— Լատ, լուրջ խօսենք, ջարունակեց որդին: Ես կամենում եմ բառուի համար գրել, որովհետեւ դրսնից զան ոչինչ չեմ սիրում եւ, ուրիշ ոչինչ բանի պիսոր չեմ: Արդեօք միքը ունիմ—բնաւ չզիտեն: Սակայն ինձ նախադասակալ է ամուսնանայ մի կեռջ նետ, որին որ պաշտում եմ, թէկուզ նա ինձ փախարենը չը հաստացաներ, թէկուզ ինձ խաքելու լիներ, բան թէ ստեղծ մի ատելի կին: Արդ ես առում եմ միան բոլոր սրաշտունները: Դաստաստանական զործեր ասես—ինձ մահու ջափ տաղտկալի են. բժիկութիւնն—զարշում եմ դարսնից. Պատարանութիւն—խօսել զիտեմ. մեռազդրութիւնն—այդ բանից ոչինչ չեմ հասկանում. մինդ—քրել եմ վրան: Ամեն բան, ինչ որ բիս ե,

հաղիս է, մերենայ է, վաճառականութիւն է—մերժելով մերժում եմ: Բայց դոցա փոխարքին ինձ հրապուրում, յափշտակում է ամենայն ինչ որ ներկայացումն է, տեսարան է, խօսակցութիւն է, զարդ է, կրքերի ընդհարումն է: Յանցաւորը դու ես: Պատճառոց մեր արեան մէջ է: Սակայն չէ որ դու բոյլ տուիր եղքօրս նկարիչ դառնալու:

— Բայց ինչ տարքերութիւն, կանչեց հայրը:

— Այս, տարքերութիւն, բայց յօգուտ իմ: Նկարիչը կարու է վրձիների, ներկերի, կտակի, տարազների, գործանոցի... գործանոց, որ ասել է արգելոց: Նա զրեք երբեք կարող չէ աշխատել այլուրեք. բայց չէ չարս պատի մէջ, իբրև մի զերի. մինչդեռ. մեր ուսումնարանը ամեն տեղ է—դաշտում, բաց օդում, գրուանքի մէջ, ճանապարհի վրայ: Մեր գործիքները միշտ մեզ հետ են, եւ գործիքներ, որոնք ոչ մեծագնի են, ոչ էլ վնասաբեր: Մի հասիկ զրիչ, փորք ինչ մերան եւ մի տեսրակ: Քսան կոսկելի ծախքով մենք կարող ենք ատեղծել մի գուսի գործոց, մի շէ դէօվով:

— Այս անզգամ սրբկայ, ասաց հայրը կամացուկ, ինչպէս լաւ է յիշում ինձնից լսած բաները... Բայց վերադառնալով իսկոյն իւր առաջին դերին, նա փոքր ինչ լույսոց յետոյ ասաց հանգիստ ձայնով. — Ես բոլորովին համաձայն եմ թեզ հետ, բանի որ դու խօսում ես աշխատութեան վայելքների մասին. այդ կտորում ինչքան էլ բան ասես, սիրակ կը լսեմ: Բայց թիզ է մի բան շարադրելը, այլ պէտք է եւ հանդէս դուրս գալ: Մի պի էս ա յօրինելով դեռ. բանը չի վերջանալ, այլ դորան ներկայացնել եւս հարկանոր է: Դրամարիքական բանաստեղծը մի անասելի բերկրանք է զգում իւր ձեռագրի ներքեւ վերջ բառը դրոշմեխս: Թշուառականը լաւ կաներ որ աւելցներ— վերջ իմ երջան կուր թե ան ն ս: Այդ բառը զրեց թէ չէ, իսկոյն սկսվում են նորա տանջանքը: Նկարիչը իւր պատկերը առարտելուն պէս ուրիշ բան չունի անելու, բայց թէ ուղարկել նորան հանդիսարանի բնելիքների մօս, եւ երեք նա փոքր ինչ բանքարի տէր է, կարող է վստան լինել, որ պատկերը կընդունուի: Սակայն թեզ գայով, մինչեւ անզգամ երեք մի կատարեալ բան շարադրելու լինես, դարձեալ պիտի դատապարտուիս մերժուած խնդրատուի, վուսուած աղերսարկուի դեր խաղալու: Գնան, սիրո ունեցիր: Առ բանգագին ձեռագիրդ, որ այնքան ծամանակ փայփայել են, համբերիր որ նա կորիզլուխ բափառէ մի բատրօնից դեսպի միասը, մի տնօրենից դեսպի միասը: Դու չես խնդրում սակայն, որ նորան ներկայացներին—ոչ. այլ աղացում ես. միայն, որ թեզ թենիկն, կարդային: Եկէք մի ամսից յետոյ: Վեց շաբարն էլ որ անցաւ. եկէք աշնան: Մի աշնան: Մի աշնան:

— Բայց վերջապէս մի օր ել լինի կը կարդան հօ, ասաց որդին փոքր ինչ զփորուած:

— Սյո, միայն թէ պատասխանելու համար, թէ՝ «Պարոն, ձեր սիկան զնորհապի է, խմաստափ... մինչեւ անգամ շատ, այո՛ շատ հանճար կայ մէջը: Անց պայծառ է, դէպքերի յաջորդութիւնը շատ ազդու եւ արագ... նետեւաբար ցանկալի է, որ դուք ներկայացնեկիր դորան... մի ուրիշ բատրօնում, որ սիրում է այդպիսի գրուածք, եւ որ ձերը մի մեծ յաջողութիւն կը զտնէր անշուշտ»:

— Բայց եւ այնպէս մի օր ել լինի կը նդունենա՞ն հօ, ասաց որդին:

— Այն, այն, կը նդունեն, կը սերտեն: Անա վերջապէս բեմի վրայ է սիկանը: Նոր չարչարանք, երէ դու նորընծայ ես: Քեզնից կը պահանջէն զնչել այն խոկ կտորները, որոնք ամենից շատ սիրելի եին սրտիդ: Ժեօն պը եմ մի էր զ կուզենայ, որ դու անպատճառ մի դեր տան նորան վերջին տեսարանում: Ամենազիստառոր դերասաններից մին կը սպանայ փոխել խոր դերը, որովհետեւ ընկերինը աւելի զքեղ է: Կ օ մի կը կը սկսէ պնիկէ, թէ նորան անհրաժեշտ է սիրուած յիմեւ եւ ամուսնանայ պիկույի վերջում: Մեկ խօսրով, ամենասապօջին դերասանները կուզենան որ դու իրանց պահանջները կատարես:

— Թող այդ բոլորն այդպէս լինի, անաց որդին եռանդով. բայց կը զայ ներկայացման օրը եւ ամեն բան կը մոռաննա: Ի՞նչ արիսն, ինչ բերկրանք: Խենչ ես խօսում ինձ նկարչի եւ նորան թըշշուալիս պատկերի մասին, որ զնում կորցում է միւս նազարների ջարրանք, ծաղը լինելով նարեւաններից: Մեր երկը քեմի վրայ մենակ է հանդիսանում մեր առջեն... մենակ էս կենդանի: Նորան բարգման դուրս եկան այդ բոլոր ընտիր դերասանները ոչ մի ուրիշ նպատակ չունին, երէ ոչ՝ մի արարած շինչել մի երկից, մի խակալան եւ մարդկային հակ ստեղծել մեր գրուածքից,— եւ մի վահանցուկ ուշայիրութիւն չէ որ լինայլում է մեր այդ գրուածքին, ինչպէս որ սովորութիւն է պատկերին լինայել: մի թերեւ ակնարկ չէ որ ձգիւմ է նորան վրայ, ինչպէս որ պատկերի նկատմամբ են անում, ոչ — նապան բայ առ բայ, տեսարան առ տեսարան, բառ առ բառ և անցնում մեր միտքը նամոլիսաստեսի նոզու մէջ, որ միանգամայն բաց է նորան ընդունելուն... Մենք լսում ենք, թէ ինչպէս այդ բազմութիւնը յուզիւմ է մեր ամեն մի խօսրից, զնշասպառ մեզ նետեւում է, մեծ ծափահարում:

— Սյո, պատասխանեց հայրը սառնութեամբ: միայն թէ զըլուինք, որ այդ բազմութիւնը երբեմն եւ սուլում է:

Օրդին փոքր ինչ սառասաց այդ սուել բառից, եւ ապա հաճզատանայն առաց.

— Առաքմաներ, սուրբութք: Դէ լաւ, սուրբութք սուանալը մեր պաշտօնն է, ինչպէս որ զինուորինն է զիղակներ սուանալը:

— Այն... բայց բանն այս է որ այդ սուրբութքները ապագայ ունին: Նկարքի ճախորդութիւնը մի անամուն Ֆիասկօն է. նորա միակ վիշտն է—մոռացութիւն: Նորան զանց են առնում, և չեն լիշտակում... ահա նորա բոլոր պատիմք: Բայց ընկած նեղինեակը... չէ թէ մի օր, այլ ջառ ու ջառ օրելի կը հայածուի նա անկման արձագանքից, այդ անկման լիշտակից: Ամբողջ շաբաթներ հրապարակ կը հանուի նորա անունը, Ստուռած զիս: թէ ինչ ածալաներով, մեծ ու փոքր թէրթի մէջ, և նա կը դատապարտուի կարդալ հազար ու մի քինուրիններ, որոնք այսպանելով կը բգրտնի իւր պիեսան նայնպէս բայլ առ բայլ, տեսարան առ տեսարան, բառ առ բառ: Հապա այս կրիտիկոսները, որոնք նորան ջասած բաները ասել կը տան: հապա քշնամինները, որոնք նորան երբեք ջունեցած մորերը կը վերագրեն: հապա դերասանները, որոնք նորան կը մասնին,—այդ դատաճան բարգմանները... Նկարիչը բարգմանի կարօտ չէ. նորան ոչ դերասաններ հարկաւոր են, ոչ սնօրկնեններ, ոչ ել բեմական զարդեր. նորա երկը բոլորովին մենակ է դուրս զայխ, մկնակ է պաշտպանվում, մենակ է յաջողում:

— Թող այդպէս լինի... պատախանեց որդին: Բայց երբ յաջողենք, ինչ զանազանութիւն նորա էն. մեր յաջողուածի մէջ: Պատկերանանշինի շշուկն անցառ թէ չէ, նորա նկարը բաղվում է պատկերների հաւաքածոյ կազուած գերեզմանատան մէջ ևն. և չէ դուրս զայխ այն տեղից, երեւ ոչ երբեմն երեխն մի ուրուականի պէս աճուրդի ժամանակ յերեւան զայխ. և ապա վերստին անմետանալու համար մի որ էն. է խառարգուին բանգարանի մէջ, ուր թէրեւս պատկերամոյ այցելուն կարող է գտնել նորան միս անգամ:

— Սիս տղան դիալոգի<sup>\*)</sup> շնորհ ունի, դիալոգի շնորհ, ասաց հայրը կամացուկ:

— Նկարիչը իւր երկի միայն մի օրինակն ունի. իսկ մենք մերը հազարներով ունինք: Մերը բազմապատկիում է բուսլոնների հնատ միասին ևն. բռաջօնների նման: Պատկեր առած բանից բանտարկուած է իւր շրջանակի մէջ. այն ինչ բատրօնական պիկասն թեւառոք է— ևն. բռջում է ամեն տեղ:... Երեխն թեզ ներկայացնուում են միեւնոյն օրը տասն, քանի բաղաբներում: Երեւելի դերասանութիւններից մին զնում է Սպանիա, Խոսկիա, Անգլիա, Շոտլանդիա, Ամերիկա. դու

<sup>\*)</sup> Դիալոգ յունաց բառ է եւ նշանակումէ խօսուկութիւն երկու կողմանէնիւրների մէջ, որ գործ էին ածում, իրենց ուսումնական մաքրեր որպատճառաթիւնն ձեւ, յունաց վիլլապատները, մանաւանդ. Պլատոն եւ Լուկիոն Դրամոց մէջ գետագութը տարբերվում է մօնօլոգից, որ է մերսկառութիւն:

Էլ հետև ես զնում, նուաճում ես աշխարհներ: Խռառվաճում եմ, որ այդ յաղրական արջաւանքներն առաւել դերասանունուն են զան տալիս, քան ըև թեզ. բայց ինչ փայր, քանի որ անունը հնջում է բայր աշխարհ: Խոկ նորոգուած ներկայացումները, որոնք յանկարծ մերածնում են անունը եւ երբեմն երեսուն տարի անցնելուց յետոյ թեզ գուարձուքին են տալիս երկու տարբեր սերտնդներից ծափանարսած տեսնելու պիեսնեղ: Խոկ նեղինակի իրաւունքը... երե մերջապէս այդ մասին էլ փոքր ինչ խօսելու, յինքնը, բկալու եւ մեր երկարութեան զինը մենք չենք բարձրացնում հարիւր հազարի, ինչուն որ անում են նկարիչները մի կտոր կտակի համար... բայց բող մեր կօմեղիան չը վիճի ոսկի ճռուր դժող մի հստ. բայց եւ այսպէս նա այն արժանաւարութիւնն ունի, որ շարունակ ածում է... եւ ամբողջ կես դար մի մի ճան է տալիս մեզ եւ մեր ժառանգներին: Ռոբերտ ինչո՞ւ է կամենում իմ զրիե՛ քո ապագայ բռուերիդ այդպիսի ընծանելու շնորհելու բախարից:

Հայրը սկսաւ ծիծաղել եւ ասաց. ծիծաղելս տեսնելով, դու ինձ պարտուած կարծեցիր. բայց եւ դեռ ոչինչ չեմ ասել թեզ այդ անեղ կոչւան ամենաղթնակ թշուառաւթեան մասին, որ է պատահարը: Ամեն ասպարէզի վրայ պատահում են անակընկալ դիմուածներ, բայց բատրօնի մէջ՝ ամենից շատ: Ակստեղ ամեն բան վիճակախաղ է: Դու կարծում ես թէ յաջողութիւն ստանայու համար մերիք է, որ պիեսադ լաւ գրուած, լաւ ընդունած եւ լաւ ներկայացուած լինի... մոլորութիւնն: Ես տեսած եմ վերջնական կրկնութեան ժամանակ ծափանարուած կօմեղիաներ, որոնք ընկել են մենց առաջին ներկայացումից: Տեսած եմ եւ այնպիսի մարդիկ, որոնք մի օր սուսաջ սրանչելի էին զտել նորան, խոկ միւս օրը՝ զազրալի: Թատրօնի տեսիլը, սրանի կազմուածքը, սուսաօսեան դեպքը, հանդիսականների թիւը, օրուայ եղանակը, օդք... այս ամեն բաներից այլափոխութում է տիեւան, երբ նա մերձենում է ու ամ պայ յի ն: Դու նորան էլ չես ճանացում. այն ինչ որ առաջ սրտառուչ էիր կարծել, սամն է այժմ. ինչ որ գուարրուն էիր կարծել, տխուր է: Տակային երեկ եռանդու է. կետնքով լի դերասանները ասես՝ թէ բիրած լենէն այսօր... Թէ նոցա եւ թէ ամբողջ պիեսայի վրայ ծամբանում է չես իմանում թէ ինչ ամերեւոյք եւ օրհասական աղքեցութիւն, որ կարծես դիրէլ, կախարդել է նոցա... խելագարուելու բան:

— Առաւել ենս յս, ասաց որդին. ամենավերին հաճոյքն էլ մենց այդ է: Անըսյուռաքիւն, անակենալութիւն, պատահանք, դիմագրաւութիւնն, թիւնկ—դրամարիքական նեղինակը վայելում է խաղի բոլոր դառն բերկրանքը եւ արաւեստի բոլոր սուրբ հրձուանքը:

— Դէ աւրեմն բող զնայ կորչի քննիչի դերս, բացականչեց հայրը: Ես խմ պարտը կատարեցի. ես թեզ զգուշացրի: Առաւել հու

ոռու զնայն անցեալիս ուրացումն կիմնէր: Կուզես, որ ես քեզ ամեն բան մի բառով ասեմ. դու մի ամագին սիսայ ևս զարծում դրամս-րիբական նեղինակ դատանալ ուզելով. բայց միեւնոյն ժամանակ ընտրութիւնի կ շատ արդար է: Մեր արուեստոց սիրոյ նման է. ուրբ չսրբիներից ամենայան է, քեզ եւ բարիբներից գերազանցը ջիմնէր: Ասկայն երկ կամենում ես երջանիկ լինել դարանով, ևս քեզ կասեմ—միայն սկըզ սիրիբ սիրոյ մեջ, ուրիշ ոչինչ: Երկ նա քեզ համբառ եւ ոսկի բերէ, առաւել եւս լա: Բայց առ նորան անզամ եւ անօժիտ: Մի արտիստ, որ իւր արուեստին նուիրուելու, միջոց ունի, նման է սիրած կնոջ նետ ամուսնացած մի մարդու: Նորան ինչ փոյր, կիմնը արդեօր հարժաստ է քեզ ոչ. ինչ փոյր, ուրիշներն արդեօր հիանում են կնոջից քեզ ոչ: Նորա երջանկութիւնը՝ այդ կնոջ տիրելու է, միայն կնո՞ց: Յառանց ուրեմն. կը ցանկան քեզ բարի ճամապարհ: Միայն քեզ ինձ նման ըշուկնիք: Աստպարեզն նկնց սկզբում ինձ այնպէս սուլեցին, որ պիեսայիս ներկայացումը կիսաւարտ մնաց:

Որդին մի վայրկեան հօր վրայ նայեցաւ լուռ ու մունջ, եւ ասաւ նորան համբուրելով, կանցէց.

—Ո՞հ, պատճառն այն էր, որ դու իմ հօրս սկս մի հայր չունիիր:

Ինձն մարդոց գորովեցաւ այս խօսքերից. այդ տեսնելով որդին փաղաքաբար մօտեցաւ նորան եւ ասաց.

—Մտածիր, քեզ որքան օգուակար կը լինիս ինձ: Արաւեստը l'art չէ ուսումնասիրիում, բայց արաւեստի արճեստը (metier) ուսումնասիրվում է. դու ինձ կ'օգնես իմ արհեստը սովորելու:

—Ես կարող եմ առաւել եւս հպաստել քեզ, պատավանեց հայրը... իմ հասակումս երեւակայութիւնը համազում է, սրդեալ. նուազում է ատեղձելու ոժք, բայց սորա փախարեն մնում է դիտողութեան ձիքը: Անցնելով քեզ նետ այն հասարակութեան միջից, որ սնունդ ովիտի տայ կօմեղիաներիդ, ես հնար կունենամ ցոյց տալու քեզ շատ ու շատ նիսրեր, սրոնք գուցէ անտես կը մնային քեզնից: Դու կիմնիս երկ զարմաղ մի սրտորդ, խոկ ես... աւելցրեց հայրը ձիձաղելով, խոկ ես կը դառնամ երեն վերցնադ սրսի շատն: Այդ կիմնի իմ երկրորդ դրամարիբական ստպարեզը: Սակայն յինչ տարօրինակ բան... Ձեր երկութիւն ընտրած վիճակն իլ ինձ սարսափ էր ազդում... խոկ այժմ ուրախացնում է: Եղբօրդ շնորհի, ինձ համար բացվում է մի նոր ապագայ. քն շնորհիս նորովում է անցեալս: Ուրեմն յառանց: Աստուած լաւ զիտէ իւր արաւը մեզ զաւակներ շնորհնիս: դոցամով մենք երկու կեանք ենք վարում—մերը եւ իրանցը:

Փ. Վ.

(Էլ. Շեստ Լըգումի, «Je Temps» 11 և 12 Ապրիլի 1883):

## ԿՈՑՈՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Երբ որ ցանկանում են մի որեկիցէ առարկայի մեծութիւնը որոշել այն ժամանակ նորան չափում են: Չափել մի որեկիցէ մեծութիւն կ'նշանակէ համեմատել տուածին միասեռ, բայց յայտնի մեծութեան հետ: Անորոշ մեծութեան հետ համեմատելու համար վերցրած այդ մեծութիւնը կոչում են չափ, կամ չափի միաւոր: Այժմ որպէս զի չափելի առարկայի մեծութիւնը արտայայտենք: պէտք է հաշուենք թէ՝ քանի անգամ է պարունակվում նորամէջ վերցրած չափը: Մեծութեան չափելուց ստացած հետևանքը (քը թէ որ չունենալու թիւ), կ'նշանակէ թիւը արտայայտում է առարկայի մեծութիւնը միաւորի հետ բաղդատման միջնորդութեամբ: Միաւորները, այսինքն չափերը կամ մեծութիւնները կարող են զանազան լինել միայն համեմատութեան համար առ միշտ հարկաւոր է իմանալ թէ ի՞նչպէս է յարարերվում տուած մեծութիւնն միաւորին: կամ միաւորն քա՞նի անգամ է պարունակվում: Զանազան միաւորներ կամ չափեր մեզանում գործ են ածվում աւելի յարմարութեան համար՝ մեծ տարածութեանց համար մեծ չափեր: իսկ փոքր տարածութեանց համար փոքր չափեր (վերստ, սաժէն, արշին ևայլն): Բայց 'ի նկատի պէտք է ունենանք, որ մեծութիւնների չափելու ժամանակ ինչպիսի չափեր էլ որ վերցնենք, այնուամենայնիւ կ'ապատահի այնպիսի գէպ.ք: որ գործածական չափերից ոչ մէկը ամբողջապէս չի պարունակուիլ չափերի մեծութեան մէջ\*): ուստի և ակամայ պէտք է գործածենք առարկայի մեծութիւնը իմանալու համար ո՛չ թէ ամբողջ չափը, այլ մի որեկիցէ մասն: Որովհետեւ ինչպէս վերեն յիշեցինք, առարկայի մեծութիւնը չափելով, մենք ստանում ենք թիւ, հետեւա-

\* ) Կրկառապիտթեան մէջ տակացուցանկումէ, որ կան այնպիսի մեծութիւններ, որոնց մէկը ոչ մի կերպ կրան մէջ չի կարող պարունակել ամբողջ թւով այն չափը, որը պարագանելիում է ամբաղջապէս միւս մեծութեան մէջ: Աթէ զրոր: քառակուսակ կողմն իւր մէջն պարունակում է դիւյիմների ամբողջ

պէս և կարելի է ասել, որ մի որ և իցե չափի մասներով մեծութիւններ չափելու ժամանակ մենք նոյնպէս կ'ստանանք թիւ և չափի մասներով արտայայտուած այդպիսի թիւը ամբողջ չափերով ստացած թուերից զանազաննելու համար կոչվում է կո ո ո ո ռ ա կ ։ Առարկայի մեծութիւնը արտայայտելու համար անհրաժեշտ է նկատել թէ՝ առաջուայ չափը քա՞նի մասների է բաժանուած և քա՞նի այդպիսի մասներ վերցրած են։ Այն թիւը որը ցոյց է տալիս թէ չափը քա՞նի մասների է բաժանուած կոչվում է յայտարար, իսկ միւսը թէ քա՞նի մասներ են վերցրած-չ ամարիչ ։ Ի նկատի ունենալով՝ որ կոտորակները շատ յաճախ առաջ են դալիս առարկաների մեծութիւնների չափելուց, մենք ասում ենք, որ գոքա (կոտորակները) ստացվում են որպէս չափման հետևանք, իսկ միւս կողմից կոտորակը ոչ թէ միայն չափման ժամանակ է ստացվում, այլ հաշուելու ժամանակ։ Երբ բաժանուած մնացորդով է լինում, այն ժամանակ յանկանալով ցոյց տալի որ այդ մնացորդն ևս պէտք է բաժանել բաժանաբարով, մենք պէտք է կազմենք այնպիսի կոտորակ, որի մէջ մնացորդն լինում է համարիչ իսկ բաժանաբարը—յայտարար։ Եթէ տուած բաժանելին փոքր է լինում բաժանաբարից, այն ժամանակ ևս բաժանուած անկարելի է լինում իսկ մեզ հարկաւոր է լինում ճիշտ կերպով տրտայատել քանորդը, ուստի և նշանակում ենք՝ որ պէտք է մէկ թիւը միւսով բաժանել բաժանելին անուանելով համարիչ իսկ բաժանաբարը—յայտարար։ Բայց պէտք է իմանալ որ կոտորակը միշտ չի կարող չափել առարկայի մասները ցոյց տալ որով չետե նա ստացվում է և այն ժամանակ, երբ կամենում ենք իմանալ թէ մէկ մեծութիւն քա՞նի անգամ է պարունակվում միւսի մէջ, այստեղ մենք վերացական թիւ ենք ստանում։ զօրօր, 25 փութը բաժանելով 10 փթով ստանում են 2½, որը ցոյց է տալիս թէ տուած թիւը քա՞նի անգամ է մեծ միւսից, դա փութի մի որևէ մասն չի արտայայտում։

Ուրեմն որպէս եղբակացութիւն կոտորակի ծագման մասին կարելի է այս ասել որ նա կարող է ստացուել կամ մեծու-

թիւ, այն ժամանակի քառակուսուոյ անկիւնագիծը ոչ թէ միայն չի պարունակել իւր մէջ դիւյմների ամբողջ թիւ, մինչեւ տնկում չի կարող պարունակել իւր մէջ ամբողջ թւով դիւյմի մի սրեւրից մասն, ուստի եւ դիւյմի ոչ մի մասն չի կարող ընդունուել իւրեւ այնպիսի չափ, որը պարունակուի ամբողջ թւով ինչ պէս քառակուսուոյ կողմի, նոյնպէս եւ անկիւնագիծի մէջ։

թիւնների չափման և կամ բաժանման ժամանակ՝  
այլապէս ևս առում են՝ իւրաքանչիւր կոտորակ կարող է զննուել  
կամ ինչպէս չափման և կամ ինչպէս բաժանման չե-  
տ և անք:

Վերևն յիշեցինք, որ կոտորակը թիւ է, ուստի և դոցա  
վրայ ևս կարելի է կատարել այն բոլոր գործողութիւնները, որոնք  
կատարվում են ամրոջ թուերի վերայ. միայն այստեղ պէտք է ի-  
մանալ թէ ինչպէս պէտք է կատարել գործողութիւնները այդ  
նօր սեռի թուերի վրայ. Աչքի առաջ ունենալով կոտորակների  
երկտեսակ ծագումն, պէտք է ընդունել որ գործողութեանց բա-  
ցատրութիւններն ևս երկու տեսակ պէտք է լինեն. այդպէս և է,  
միայն քամբաղտաբար թուարանական ձեռնարկների մէջ այս կող-  
մանէ ուշագրութիւն չեն դարձնում ուստի և գործողութիւնները  
կատարելու բացատրութիւնները պատահական են երկումն այնպէս  
որ միմեանց մէջ կապ չեն ունենում ուստի և կատարելապէս հաս-  
կանալի եւ չեն լինում\*)

Այժմ մենք անցնենք կոտորակների գործողութեանց կատա-  
րելու բացատրութեանց և ցոյց տանք թէ ի՞նչ զանազանութիւն  
կայ կոտորակների ծագման թէ այս և թէ այն բացատրութեան  
ժամանակ:

Գործութեան: —Գումարումն կոչում են այնպիսի գոր-  
ծողութեան, որի միջնորդութեամբ երկու կամ մի  
քանի թուեր միանում են ՚ի մի: Գումարել կարելի է միայն  
այնպիսի թուերն: որոնք միատեսակ միաւորներով են արտայայ-  
տուած, ուստի և կոտորակները ևս կարելի է գումարել միայն այն  
ժամանակ, երբ նոքա արտայայտուած են միատեսակ մասներով:  
այնինքն եթէ նոցա յայտարարները մէկ են, Մենք այսպէս ենք  
դառնում, զննելով կոտորակները որպէս չափման չետեանք: Գու-  
մարել կոտորակներ, կ'նշանակէ իմանալ թէ որքան մասներ կան  
բոլոր տուած կոտորակներում միասին վերցրած: ուստի և միա-  
տեսակ յայտարարներով կոտորակների գումարելու չամար  
ի ամար չամար է գումարել նոցա չամարի չերը, իսկ յայտարարները  
մասն ժամանակ յայտարարը չի փոխվում, որովհետեւ ինչպիսի մաս-

\*) Արեխայս հետ սպարութելու ժամանակ յայտնի բան է, հարկաւար է  
միայն մէկ եղանակի բացատրութիւն ընդունել՝ համաձայնեցնելով բոլոր գործո-  
ղութիւնների բացատրութիւնները կոտարակի վրայ ունեցած մէկ հայեցքի  
հետ. Ուսուցչի համար հարկաւար է իմանալ այս ևւ այն բացատրութիւնները,  
որպէս զի նոցա մէջ չը չփոխուի:

ներ գումարվում են, նշնպիսիք և ստացվում են (միանող մասները իւրեանց մեծութեամբ չեն կարող փախուել). Համարիչները ցոյց են տալիս թէ քանի մասներ կան իւրաքանչւը գումարելոյ մէջ, հետևապէս նոցա գումարը ցոյց կ'այս բոլոր մասների միապին վեր. ցրած գումարը:

Հանումն։ Հանումն կոչվում է այնպիսի գործութիւնը որի միջնորդութեամբ մէկ թիւը հանվում է միւսսից. Միատեսակ յայտարարներով կոտորակների հանման ժամանակ պէտք է ստացուին այնպիսի մասներ, որպիսիք և կային. կը նշանակե յայտարարը պէտք է միւսնոյնը մնայ, որը և էր տուած կոտորակներում. մնացորդի մէջ մասներին քանակութիւնը իմանալու համար պէտք է նուազելոյ համարիչներ հանել հանելոյ համարիչը, որովհետեւ գոյցանով է ցոյց տրվում տուած թուերի մէջ պարունակած մասների թիւը:

Եթէ տուած են կոտորակներ զանազան յայտարարներով, այն ժամանակ անկարելի է գումարել և հանել քանի որ նօքա միասեռ մասներով չեն արտայայտուած, կամ պարզ ասել քանի որ մի յայտարարի չեն բերուած։ Կոտորակները միշտ կարելի է միատեսակ մասներով արտայայտել որովհետեւ գորք մեծութեամբ չեն փոխուել եթէ նոցա համարիչը և յայտարարը միւսնոյն թուով բաղմապատկենք, միոյն այլ տեսք կը ստանան։ Այս յատկութիւնը չեմ բացատրելու, որ վետե յօդուածիս բովանդակութիւնից գուրս է, մոնաւանդ որ հեշտ էլ բացատրվում է։ Եթէ միջօց ունենք համարիչը և յայտարարը մի որևէից թուով բաղմապատկելով կոտորակի ձեւը փոխել այն ժամանակ մենք կարող ենք այնպիսի բաղմապատկեններ դժոնիլ որոնք տուած կոտորակները մի յայտարարի կ'ըրեն։ Այս գեպքումն մնում է միայն ամենահասարակ կերպով բոլոր յայտարարները միմեանց հետ բաղմապատկել—ահա և մի յայտարար՝ բայց դորա հետ հարկաւոր է իւրաքանչիւր կոտորակի համարիչ բաղմապատկել միւս կոտորակների յայտարարներով։ Օքինակի համար վերցնենք՝  $\frac{4}{14} + \frac{2}{3} + \frac{1}{2}$ . այս կոտորակն մեր ասածին

համեմատ մի յայտարարի բերելով՝  $\frac{4 \times (3, 2)}{14 \times (3, 2)} + \frac{2 \times (14, 2)}{14 \times (2)} + \frac{1 \times (14, 3)}{2 \times (14, 3)}$ , Հատ ուրիշ գեպքերում կարելի է գտնել այնպիսի յայտարար, որով կը ձեւակերպուին բոլոր կոտորակները և որը բաւականին փոքր կ'լինի բոլոր տուածների արտազրեալից։ Աերե յիշած օրինակում ընդհանուր յայտարարն է 14. 3  $\frac{1}{2}=84$ , փոխանակ այս մեծ թիւը գործածելու մենք կարող ենք սորան փոխարինել 42 թուով, որովհետեւ տուած կոտորակների յայտարա-

ներից իւրաքանչիւրը կարող է այդպիսի յայտարարի փոխարկուել յայտարարի մի որ և իցէ թուի բազմապատկութեամբ (առաջին յայտարարը բազմապատկելով 3ով երկրորդը—14ով երկրորդը—21ով): Այս եղանակից մենք միշտ պէտք է օգուտ քաղենք, որպէս զեւստ կարելոյն պարզ կերպով արտայայտենք կոտորակները, այսինքն փոքրիկ համարիչներով և յայտարարներով: Բայց որովհետեւ յայտարարներից ամենափոքրիկի գտնելու եղանակների բացատրութիւնը գործողութիւնների կատարման բացատրելուն չէ վերաբերում: Ուստի և այստեղ չեմ բացատրել թէ դա ինչպէս է որոշվում: Դա արդէն յայտնի է:

Տուած կոտորակները զննելով որպէս բաժանման հետեւ անք, մենք պէտք է գործողութիւնների կատարման բացատրութիւնն այլ կերպ անենք\*: Գործը նորանումն է, որ ինչ գործողութիւն անելու հենք քանորդի վրայ, որը կոտորակով է արտայայտուած, որովհետեւ մեկ թւով անշնարին է արտայայտել: պէտք է նցյնը փոխարինենք այդ քանորդն արտայայտող բաժանելով և բաժանարարի վրայ արած գործողութիւններով: Եթէ բոլոր կոտորակներում բաժանարարը՝ յայտարարը միենոյնն է, այն ժամանակ այն քանորդը, որը կ'հաւասարուի բոլոր տուած քանորդների գումարին, կ'ստացուի այն ժամանակ, երբ մենք կ'բաժանենք բոլոր բաժանելինների գումարը միենոյն բաժանարարով: Այդպէս կ'լինի այն պատճառով, որ բաժանելուն աւելացրած թիւը վերջինի հետ նոյնպէս բաժանվում է բաժանարարով—այսինքն քանորդին աւելանում ոչ թէ բաժանելուն աւելացրած թիւը, այլ այնպիսի թիւ, որը կ'ստացուի նոյն յաւելուածքի բաժանելուց բաժանարարով: Հետևապէս եթէ բաժանարարը բոլոր գէպքերում միանման է, այն ժամանակ միայն բաժանելուն միացնելով բոլոր մնացեալները և բաժանելով նոցա գումարը միենոյն բաժանարարով, մենք կ'միացնենք միայն քանորդին բոլոր մնացեալները, այսինքն կ'ստանանք բոլոր առաջուայ քանորդների գումարին հաւասար քանորդ:

$$\begin{aligned} & \text{Օրինակ } \frac{21}{8} + \frac{35}{8} + \frac{17}{8} + \frac{47}{8} = 2\frac{5}{8} + 4\frac{3}{8} + 2\frac{1}{8} + 5\frac{7}{8} = 15. \text{ Կամ } \frac{21+35+17+47}{8} = \frac{120}{8} = 15. \end{aligned}$$

\* ) Դասագրերում գումարումն եւ հանումն երբէք այս եղանակով չեն բացատրվում: Պրակտիկան առաջնետեւ առաջին բացատրութիւնն բաւականին հասարակ է: Բայց բազմապատկեւմն եւ բաժանումն, ինչպէս նորգերւն կ'անեննենք, դասագրերում՝ զանազան կերպ են բացատրում: Երբէեմն բացատրութեամն հիմք ընդունելով կոտորակի սրոշումն որպէս չոփման հետեւանք, երբէեմն որպէս բաժանման հետեւանք: Բայց երբէք բացատրութեամն զանազան բնաւորութեամն պատման ավագանութեամն ցայց չի տրվում, ուստի եւ խառնաշխիթութիւնն է յառաջանաւմ:

Յառաջ բերած բացատրութիւնն իւր վերացականութեան պատճառով կարող է գժուար երեալ ըայց իսկապէս նորանում բացատրվում են քանորդի շատ պարզ և որոշ յատկութիւնները ցոյց է արգում թէ նա ի՞նչպէս է փօխվում երբ փօխվում է բաժանելին իրան մի որեկցէ թիւ աւելացնելովն, միայն բացատրութեան համար թէ ի՞նչպէս է փօխարինվում կոտորակների (քանորդների) վրայ կատարած գործողութիւնը բաժանելիների գործողութիւններով քանորդի ցոյց տուած յատկութիւնը բացատրվում է ուրիշ ձևով: Թուաբանութեան գասագրքերում այդպիսի բացատրութիւններ չ'կան: Հեղինակները միայն բաւականացել են գումարման և հանման այն բացատրութիւններով երբ կոտորակն արտայայտուած է միաւորի մասներով: բայց մենք տեսանք, որ կոտորակների ծագումն այդպէս բացատրել միշտ յարմար չէ: Կոտորակների գործողութիւնների կատարումն միշտ միեւնշնն է, ինչպէս էլ որ մենք բացատրենք: ուստի կարելի էր բաւականանալ միայն մէկ բացատրութեամբ: բայց ո՛չ գործն աւելի պարզ հասկանալու համար հարկաւոր է ծանօթանանալ և զանազան սեռի բացատրութեանց հետ: Դժուար չէ հասկանալ որ երբ մի որեկցէ կոտորակ կամ քանորդ հանում ենք միւս կոտորակից կամ քանորդից, որոնք արտայատուած են բաժանելիով և բաժանարարով և բացի գորանից մէկ յայտարար ևս ունին, այն ժամանակ միայն պէտք է մէկ բաժանելին հրամակ: Օրինակ՝

$$\frac{125}{7} - \frac{35}{7} = 17\frac{6}{7} - 5 = 12\frac{6}{7} \text{ կամ } \frac{125-35}{7} = \frac{90}{7} = 12\frac{6}{7}.$$

Գումարման ժամանակ մենք աչքի առաջ ունեինք այնպիսի կոտորակներ, որոնք միատեսակ յայտարարներ ունին: բայց եթէ բաժանարարները (յայտարարները) զանազան լինեն, այն ժամանակ քանորդներն անշնարին է որ գումարուին, ուստի և որոշելու համար թէ գորա ինչպէս կյարաբերեն գէպի որոնելին, հսրկ է որ բաժանելիները և բաժանարարները փօխարինուին ուրիշ թուերով՝ կոտորակները մի յայտարարի բերելով: և այդ շատ հնարաւոր է, եթէ բաժանելին և բաժանարարը բազմապատկենք մի որեկցէ թւով և այն ժամանակ քանորդն չի փօխուիլ: Միեւնշնը պէտք է ասել և հանման մասին, որ նախ քան բաժանելիից հանելը պէտք է նուազելուց և հանելոյ բաժանարարները հաւասարացնել ինչպէս որ կատարում ենք մի յայտարարի բերելու ժամանակ:

Դառնանք այժմ բազմապատկութեան և բաժանման գործողութեանց բացատրութիւններին:

Բազմապատկութիւնն այն պիսի գործողութիւն է, որի միջնորդութեամբ բազմապատկութիւնը պէտք է

կազմելնոր թիւ այնպէս ինչպէս որ բազմապատկեր կազմուած է միաւ որներից:

Թէ ի՞նչպէս է կոտորակը բազմապատկվում ամբողջ թւով այդ չեմ բացատրելու, որովհետեւ գա բաւականին հեշտ է. կ'անցնենք միւս դիպուածներին:

Ամբողջ թիւը կոտորակով բազմապատկութետն ժամանակ մենք բազմապատկութեան որոշումն հիմք ընդունելով պէտք է ասենք թէ՝ ինչպէս բազմապատկիչն կազմուած է միաւորներից այնպէս և նոր թիւն պէտք է կազմենք բազմապատկիչնուց: Օրինակի համար վերցնենք՝  $28 \times \frac{5}{12}$ , այսուել բազմապատկիչն կազմուած է այսպէս՝ միաւորն բաժանած է 12 մասն և վերցրած է 5 մասն. այսպէս և նոր թիւը պէտք է կազմուի՝ հարկաւոր է տուած բազմապատկելին բաժանել այնքան մասների, որքան մասների բաժանուած է միաւորն բազմապատկիչումն և վերցնել այնքան մասներ, որքան մասներ վերցրած են բազմապատկիչումն: Ուրիշ խօսքով՝ պէտք է բազմապատկելին բաժանել յայտարարով և ստացածը բազմապատկել կոտորակի համարիչով՝  $-28 \times \frac{5}{12} = \frac{28 \times 5}{12} = \frac{140}{12} = 11 \frac{8}{12} = 11 \frac{2}{3}$ :

Այսպէս ենք դատում ընդունելով կոտորակը որպէս չափման չետևանք:

Աերև յիշածիս պէս է բացատրվում բազմապատկումն և այն դեպքումն, երբ կոտորակը կոտորակի վրայ ենք բազմապատկում՝  $\frac{3}{4} \times \frac{11}{5} = (\frac{3}{4} \cdot 5) \times 11 = \frac{3 \times 11}{4 \times 5}$ .

Քննելով կոտորակը որպէս քանորդ, մենք պէտք է աշխատենք այդ քանորդով բազմապատկումն փոխարինել այն թուերի գործողութիւններով, որոնց միջնորդութեամբ քանորդն է արտայայտուած. գա արտայայտուած է բաժանելով և բաժանաբարով ներքեն բերած բացատրութիւնները աւելի պարզ հասկանալու համար հարկաւոր է աչքի առաջ ունենալ որ բաժանելին միշտ հաւասար է քանորդին, բազմապատկած բաժանաբարով. այժմ եթէ մենք ամբողջ թիւը բազմապատկենք կոտորակի բաժանելով, այն ժամանակ կը բազմապատկենք ոչ թէ բուն քանորդով, որ և հարկաւոր էր, այլ և բաժանաբարով ևս. չետևապէս յառաջ է դալիս, որ այդ աւելորդ բազմապատկիչը—բաժանաբարը պէտք է դուրս հանել բաժանելով ամբողջ թուի և բաժանելով բազմապատկելուց ստացած թիւը բաժանաբարով—իսկական արտադրեալն իմանալու համար. Աերցնենք օրինակ՝  $28 \times \frac{5}{12}$ . այսուել եթէ բազմապատկենք 5 ով, արտադրեալն բնականից աւելի կ'լինի, որովհետեւ 28-ը բացի

Քանորդից բազմապատկվումէ և 12 ոլու այն չիման վրայ որ 5-ն հաւասար է 12 ն, բազմապատկած վերցրած քանորդով ուստի սիսակն ուղղելու համար հարկաւոր է ստացած թիւը բաժանել 12-ով՝

$$28 \times \frac{5}{12} = \frac{28 \times 5}{12} = \frac{140}{12} = 11\frac{2}{3}$$

Բացատրութիւնն մինչեղյն է և այն ժամանակ՝ երբ կոտորակն ամբողջ քանորդ կ'պարզւնակէ՝  $5 \times \frac{12}{3} = 5 \times 4$ . (այսուել 12 =  $3 \times 4$ ): Ա.երեւ յառաջ բերած օրինակներից այսպիսի կանոն է ծագում) որ բազմապատկելու համար պէտք է տուած թիւը բազմապատկել բազմապատկիչը համարիչով և յայտարարով էլ բաժանել:

Բաժանումն այնպիսի գործողութիւն է, որ արտադրութեամբ առաջանակ է բազմապատկելու համար պէտք է տուած թիւը գտնվում է միւս բազմապատկելու համար պէտք է ամբողջ թուի կոտորակով բաժանման բացատրութիւնն պէտք է բաց թողնեմ: Օրովհյետեւ գլխաւոր գժուարութիւնը միւս գիւղուածներն են ներկայացնում:

Կոտորակը իրբեւ չափման հետևանք ենք ընդունում: Բաժանել ամբողջ թիւը կոտորակով կ'նշանակէ գտնել այնպիսի թիւ, որը բազմապատկելով բաժանարարի վրայ ստանանք բաժանելին: Այսուել բաժանարարը կոտորակ է, բազմապատկելով գորա վրա այն քանորդը, որը անյայտ է, մենք կ'վերցնենք գորա մէկ կամ մի քանի մասը բայց ընդունին և կ'ստանանք բաժանելին: Օրինակի համար եթէ տուած է 6:  $\frac{5}{9}$ , այն ժամանակ մենք պէտք է այնպիսի թիւ գտնենք, որը բազմապատկելով  $\frac{5}{9}$ -ով տայ 6. բայց բազմապատկել թիւը  $\frac{5}{9}$ -ով կ'նշանակէ վերցնել 5 իններորդ մասն թուի: Բազմապատկելով որոնելին  $\frac{5}{9}$ -ով մենք պէտք է ստանանք բաժանելին 6: կ'նշանակէ այդ բաժանելին հաւասար է որոնելոյ ։ Մէկ խօսքով ամբողջ թիւը կոտորակով բաժանման ժամանակ մենք միշտ կարող ենք ասել որ բաժանելին կազմում է որոնելոյ մասը, իսկ թէ ի՞նչ մասն, այդ ցոյց է տալիս բաժանարարը: Իմանալով որ ամբողջ թուի կոտորակով բաժանման ժամանակ բաժանելին կազմում է որոնելոյ մասը և բաժանարարն էլ ցոյց է տալիս թէ ի՞նչ մասն, չեծու է բացատրել: Թէ ի՞նչպէս պէտք է լուծել խնդիրը: Որովհյետեւ բաժանելին իրան մէջ որոնելոյ մի քանի մասն է պարունակում: այդ պատճառաւ նախ և առաջ պէտք է իմանալ թէ ի՞նչին կ'հաւասարի որոնելոյ մէկ մասը: Հետևապէս բաժանելին պէտք է բաժանել կոտորակի համարիչով: Իմանալով որոնելոյ մէկ մասը, որպէս զի բոլոր թիւը գտնել, պէտք է այդ մասը բազմապատկել բոլոր մասերի, թուով այսինքն կոտորակի յայտարարով: (Յայտարարը ցոյց է տալիս թէ ամբողջի մէջ քա՞նի մասն կայ): Զորօրինակ բա-

ժանել 6 ը 5/9-ով կ'նշանակէ գտնել այնպիսի թիւ, որի 5/9 ը կազմում են 6 միաւորները։ Անյայտը՝ որոնելու համար հարկաւոր է նախ գտնել նրա 1/9 մասը, իսկ յետոյ 8/9 մասը, կամ բոլոր թիւը։ Որ ովհետև 6 մէջ, գտնվումէ որոնելոյ 5/9, այդ պատճառաւ 6 ը բաժաժանելով 5-ով այսինքն կոտորակ բաժանաբարարի համարիչով, մենք կ'իմանանք որոնելու մէկ իններորդ մասը, նա հաւասար է 8/9, ամբողջ թիւը գտնելու համար պէտք է 8/9 բազմապատկել 9, այսինքն տուած բաժանաբարարի յայտարարով, որովհետև ամրող որոնելոյ մէջ պէտք է գտնուին ինն այդպիսի մասներ, կ'ստանանք  $\frac{6}{5} \times 9 = \frac{54}{5}$ , Ստուգելու համար կարելի է ստացած  $\frac{54}{5}$  բազմապատկել  $\frac{5}{9}$  ով, այն ժամանակ կ'ստացուի բաժանելոն՝  $\frac{54}{5} \times \frac{5}{9} = \frac{54 \cdot 5}{5 \cdot 9} = \frac{54 \cdot 5}{5 \cdot 9} = 6$ .

Իսկ բաժանման գործողութեան բացատրութեան ժամանակ՝ այն գէպքում երբ կոտորակն քննվում է իրրե քանորդ (բաժանման հետեանք), մենք պէտք է քանորդով բաժանումն փոխարինենք բաժանելոյ և բաժանաբարարի վրայ արած գործողութիւնով) որովհետև նոյն իսկ քանորդը չո կայ։ Բաժանելով տուած ամրող թիւը բաժանելիով, մենք պէտք է իմանանք որ բաժանում ենք ոչ թէ միայն քանորդով, այլ և բաժանաբարով ևս, որովհետև բաժանելին հաւասար է քանորդին, բազմապատկած բաժանաբարով, հետեապէս գտնուած թիւը պէտք է բազմապատկել բաժանաբարով, որովհետև զրանով մենք բաժանեցինք թէ և այդ հարկաւոր չէր։ Օրինակ՝  $15 : \frac{7}{8}$ , եթէ 15 բաժանենք 7-ով՝ այն ժամանակ մենք կ'բաժանենք ոչ թէ քանորդով, այլ 8 ով ևս, որովհետև  $7 = \frac{7}{8} \times 8$ , ուստի և պակաս թիւ կ'ստանանք։ Իսկական քանորդը գտնելու համար մենք պէտք է ստացած թիւն բազմապատկենք և  $8 \cdot \frac{15}{7} = 8 \cdot 2 \frac{1}{7} = 17 \frac{1}{7}$ , Այս գործողութիւնը ցոյց է տալիս, որ կոտորակով բաժանման կանոնն այսպիսի է՝ տուած թիւը պէտք է բաժանել բաժանաբարի համարիչով, իսկ ստացածը բազմապատկել յայտարարով, նոյնպիսի բացատրութիւն է լինում և այն գէպքում, երբ կոտորակն բաժանենք կոտորակով։

Մէկ նկատողութիւն ևս և գորանով կ'վերջացնենք մեր յօդուածը։ Երբ որ ամրող թիւը բաժանելիս կոտորակի վրայ մենք կոտորակի թուերը տեղափոխենք՝ համարիչը դարձնելով յայտարար, իսկ յայտարարը՝ համարիչ այն ժամանակ կ'ստանանք հակառակ կոտորակ։ այդ գէպքումն եթէ ամրող թիւը բազմապատկենք հակա-

սակ կոտորակով այն ժամանակ կ'ստանանք նոյն թիւն, ինչպիսի  
և կ'ստացուի ամբողջ թուի բաժանմամբ կոտորակի վրայ: Այս հիման  
վրայ յաճախ ասում են թէ՝ կոտորակով բաժանել կ'նշանակէ  
հակառակ կոտորակով բազմապատկել: այսպիսի արտայայտութիւն  
ճիշտ չէ, որովհետեւ վճռելի հարցի իմաստին համեմատ բոլորովին  
մէկ չէ ասել թէ մենք պէտք է բաժանենք որոշեալ թիւը տուած  
կոտորակով: կամ բազմապատկենք հակառակով: թէ և երկու գեպ-  
քումն ևս միենոյն թիւն կ'ստանանք: Աերև յիշած իմ բոլոր բա-  
ցատրութիւններով ես բաւականանում եմ: ընդունելով որ դոքա  
պարզ կերպով ցցց են տալիս կոտորակների գործողութեանց կա-  
տարելու բացատրութիւնների այն զանազանակերպութեան պատ-  
ճառն, որը պատահում է մեր թուաբանական դասագրեանց մէջ,  
իմ առաջ բերած բացատրութիւններով ցցց են տրվում՝ իւրա-  
քանչիւր սեռի բացատրութեանց նշանակութիւնը: Մանկանց հետ  
պարագելու ժամանակ, իմ կարծիքով, կոտորակների գործողու-  
թեանց բացատրելումն ուսուցիչն պէտք է պահպանէ կոտորակի  
վրայ ունեցած միայն մէկ հայեացքն (յայտնի բան է, կոտորակն  
զննելով որպէս չափման հետեանք), որովհետեւ այն ժամանակ  
միայն կարելի է ցցց տալ բոլոր առանձին բացատրութեանց միջի  
կապը, այն ժամանակ միայն կարելի է որոշումներից կանոններ  
դուրս բերել: Եթէսեռ բացատրութիւնները անցնել հարկաւոր  
չէ, որովհետեւ շատ կարելի է, դա աշակերտին կ'չփոթեցնէ:

ԴՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑ:

## ՄԱՏԵՎԱԿՈՍՈՒԹԻՒՆ

I, «Բնախօսութիւն» հայ ուսումնարանների համար, թարգմանեց  
Աբեղի Տ. Սաբահան Աբաղեանց, Թիֆլիս 1881 գինն է 80 կ:

Ն. Զօրօվի Եօսեմ օ պրիօդք ռուսերէն գրքի թարգմանու-  
թիւնն է «Բնախօսութիւնը» որ իսկապէս պէտք էր անուանել «Բնա-  
պատմական զրոյցներ» կամ, «Խօսպ բնութեան վերայ», Գիրքը բաղ-  
կացած է 318 երեսից, ունի հինգ տառանձին մաս, որոնց անունն  
այստեղ «զլուխ» է. իւրաքանչիւր մասը բաղկացած է մի քանի խօ-  
սակցութիւնից, բոլոր խօսակցութիւնների թիւն է 43. նոքա բո-  
վանդակում են ընդհանուր տարրական գիտելքներ բնութեան վե-  
րայ, այստեղ կարելի է կարգալ նկարագրութիւններ և բացատրու-  
թիւններ աստղաբաշխական և լնական աշխարհագրութիւնից, Բնա-  
կան պատմութիւնից, բնագիտութիւնից և այլ այսպիսի բնապատ-  
մական առարկաներից, այստեղ պատկերանում են մեր աշքի առաջ-  
երկրագունդն և արեգակը, մոլորակներն և աստղերը, գիտաւորներն  
և շրջմոլիկները, հողը, ջուրը, օքը, մջնոլորտն իւր լնական երե-  
ւյթներով, տարուայ եղանակները, կենդանիների, բուսականու-  
թեան և հանքերի տեսութիւնը և այլն. Ուրեմն «Բնախօսութեան»  
43 խօսակցութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ տարրական գասեր վե-  
րը բերուած զանազան գիտութիւններից: «Բնախօսութիւնն» ունի  
և 24 պատկեր:

Թարգմանչը յառաջարանից իմանում ենք, որ այդ գրքի ռու-  
սերէն բնագիրը «Առասաւորութեան նաևարարութիւնից բացի ոսկէ  
մեղալով վարձատրուելուց», պյլ և ուժ անգամ տպագրուած է».  
Դարձեալ նշյն յառաջարանից, ինչպէս և զրքի խորագրից իմանում  
ենք, որ Բնախօսութիւնը թարգմանուել է Հայոց ծխական ուսում-  
նարանների համար, որոնք ինչպէս թարգմանիչն ապացուցանում  
է: մեծ կարօտութիւն ունեն այդպիսի մի ձեռնարկի և «Հէնց այդ  
կարօտութիւնը կարեաց չափ լցուցանելու մաքով էր իսկապէս, որ  
ձեռք զարկեցինք, ասում է, թարգմանել չնոյելով մեր ծանրա-  
բեռնուած լինելուն չորս տեսակ բաժանման աշակերտաց դասատ-  
րութեամբ»:

Որքան և յաջող է նիւթի ընտրութիւնն, այնուամենայնիւ,  
պէտք է աւելացնել և այս որ թարգմանութեան հայերէն բարբառը

շատ տկար է և անյաջող մանաւանդ գիտնական բառերի ընտրութիւնը: Այս հանգամանքն և արգելք է լինում այդ գեղեցիկ աշխատութեան ընդհանրանալուն Հայոց ուսումնարաններում թէ և շատ ցանկալի կը լիներ, որ ոռուսերէն չկմացող հայ ուսուցելու բարը կողմակի կերպով օգուտ քաղէին բնախօսութեան բովանդակութիւնից՝ իրենց դասերն առաւել կենդանացնելու ճոխացնելու համար:

II. «Մարդակազմութեան տարբական» դասեր 18 պատկերներով գպրոցների համար աշխատասիրեց Զ. Գրէտէւանց, Թիֆլիս 1881, զին է 50 կոռ.

Այս ձեռնարկը պատրաստելու համար հեղինակն օգուտ է քաղել զանազան ուսւերէն լիզուով թարգմանութիւններից և հեղինակութիւններից, որոնցից նա ամրող կտորներ է թարգմանելը. հեղինակի սահմանը միայն պատմելու ձևը և նիւթերի դասաւորութիւնն է: Գիրքը բաղկացած է 127 մաքուր տպած երեսներից. նախ և յառաջ նկարազրուած է մարդուս կմախիրը, ապա հետզետէ սակաւ կամ աւելի մանրամասնութեամբ նկարազրուած են մարդուս մարտզութեան և արեան շըջանի գործարաններն ուղելը, մկանունքը, նշառութեան գործարաններն և զգայարանները. վերջումը կան և մի քանի յաւելուածներ՝ նախ մարդուս հինգ հասակների՝ այն է մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան, սյրութեան և ծերութեան մասին և երկրորդ մարդկային ազգի զանազան ցեղերի և կրօնների մասին: Հեղինակի յառաջարանից երեսում է, որ այդ ձեռնարկին համեմատ դասախոսութիւնն սկսութիւններ ունեցած է նա Տփխիսի ներսիսեան և Գայիանեան դպրոցներում: որոնց մէջ մարդկակալութեան դասերը շարունակում են և այժմ նշքն հեղինակն այդ առարկայի դասախոսութիւնն սկսում էր ներսիսեան դպրոցի առաջին դասարանից: իսկ Գայիանեան դպրոցի երկրորդ դասարանից. յառաջարանի մէջ հեղինակը ցոյց է տալիս և այն միջոցները թէ ինչպէս պէտք է իրերցուցական ձեւ տալ դասերին:

Եեռնարկն ընդհանրապէս շատ յաջող է կազմուած և փորձառութեան ապացոյց երեսում է նորա մէջ. սակայն այստեղ էլ Հայոց լեզուն և մանաւանդ գիտնական բառակազմութիւնը շատ տկար է: Առաւել աչքի է ընկնում՝ նաև այն, որ ձեռնարկի իւրաքանչեւր էջը լի է ուսւերէն գրուած ստուդարանութիւններով. հայերէնը լաւ հասկանալու համար են դոքա թէ միանգամով երկու գործ կատարած լինելու համար, այդ գժուար է իմանալ: սակայն որն և

լինի: մի տարօրինակ երեսյթ է այդ և մեծապէս խանգարում է դասերի կանոնաւոր ընթացքին. ուր մնաց որ առաջին կամ երկրորդ զասարանի աշակերտների համար միանգամայն աւելորդ է:

Հայ ուսուցիչների համար չատ լաւ նպաստ է մարդակազմութեան ձեռնարկը. և եթէ այդ առարկան դպրոցների ստորին դասարաններում աւանդուելու է, ծաւալի կողմից շրջանին համապատշաճ առաւել յաջողակ ընտրութիւն չէր կարելի անել քան որ գտնում ենք ներկայ ձեռնարկի մէջ: Նիւթի լուսարանութեանը մեծապէս նպաստում են և պատկերները, որոնցից մի մասի պահասաւոր լինելը խոստովանում է և հեղինակը:

**Յ. «Մարդակազմութիւն» (անատօմիա)** Հայոց ուսումնարանների համար, աշխատասիրութիւն երեանայ քաղաքային բժիշկ Աւագ Տէրենեանցի:

Ներկայ հրատարակութեան տարրերութիւնը նախընթացից այն է նախ, որ ունի մի առանձին բառ գրքուկ, ուր իւրաքանչիւր հայերէն անուանակոչութեան՝ դէմը նշանակուած է ոուսերէնը. և երկրորդ որ նշարագրութեան ժամանակ իւրաքանչիւր հայերէն անուանակոչութեան: Հետ միասին զրուած է և լատիներէնը: Այս երկու տարրերութիւններն ել առաւելութիւն են տալիս հրատարակութեանը, որովհետև առաջինով կարելի է համեմատութիւն անել ոուսերէն ձեռնարկների և պատկերների հետ: Իսկ երկրորդով կարելի է հաղորդակից լինել ընդհանուր գիտնական հեղինակութիւնների բովանդակութեանը: Բայց այս առաւելութիւնները մի դպրոցական ձեռնարկի համար երկրորդական են և բաւական նսեմանում են նախ նորանով որ ձեռնարկը չունի լուսաբանով պատկերներ և նկարներ և երկրորդ նորանով որ տիպը շատ տգեղ է և լի սխալներով: (ամբողջութեան մէջ 8 երես տեղ միայն վրիպակներն են բռնել) Եսկ եթէ աչքի առաջ ունենանք և այն, որ հեղինակն իւր ձեռնարկը պատրաստել է Մայր Աթոռի Գեորգեան Ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի համար: Եիշեալ առաւելութիւնները կորցնում են իրենց նշանակութիւնը, որովհետև նախ մանկավարժական հանոններին հակառակ է օտար լեզուն բանեցնել անգու ուր դասաւութեան լեզուն հայերէն է և երկրորդ նոյն իսկ աշակերտների յիշողութեան համար մի անօգուտ բեռ են օտարազգի բառ երբ, քանի որ նոքա շատ երկար տարիներ չպիտի հանդիպեն օտար մասնագիտական գրքերի և այն էլ այն ժամանակ պիտի հանդիպեն երբ նզքա արդարեւ անատօմիային կարօտութիւն ունեցող մի մասնագիտութիւն ընտրելու լինեն: Այս հանգամանքը որքան և աննշան է մի տարրական դասագրքի համար, այնքան

նշանաւոր է իւրաքանչիւր հեղինակի աշխատութեան համար, որովհետև ինչպէս երկում է մարդակաղմութեան հեղինակը մեծ ջանք է գործ դրել հայերէն բառեր ստեղծելու. և այդ գործի մէջ ձգտել է նաև ներդաշնակութիւն պահպանել ընտրած հայերէնի և օտարազգի բնագրի ստուգաբանութեան մէջ։ Այս աշխատութիւնը թերեւ չէ. և դորանով փայլում է ներկայ մարդակաղմութեան ձեռնարկը. ցաւալի է որ բառակաղմութեան համար հեղինակը չէ ունեցել լաւ աղլիւրներ։

Մարդակաղմութեան այս նոր ձեռնարկը բաղկացած է 132 երեսից, որոնցից 95 բուն նկարագրութիւնն է, 97—123 բառագրքուկն է, իսկ մնացածը վրիպ պակներ։ Յառաջարանի մէջ հեղինակն առողջապահութեան անունով յորդորում է փոքր հասկից ուսումնասիրել մարմնակաղմութիւնը. յառաջարանին հետեւում է, մի հրահանք «լանջքը ու փորը բանալու. մասին», նմանապէս և «մանրադիտական պատրաստածի մասին»։

---

Այս երեք բնապատմական հրատարակութիւններն և սոցանմանները ժամանակակից մատաղ սերնդի համար առաւել օգտակար կը լինէին, եթէ նոցա մէջ նկատելի չը լինէր հայերէն բարբառի տկարութիւնը. Աչքի առաջ ունենալով այդ իսկ հանգամանքը մենք այստեղ հարկ ենք համորում կանգ առնել՝ ոչ թէ յիշեալ ձեռնարկների պակասութիւնները ցցց տալու գիտմամբ, այլ մի որևից է նպաստ ընձեռելու նոցա. որոնք այսուհետեւ ձեռնամուխ կը լինէին այդպիսի թարգմանութիւնների և փոխագրութիւնների։ Մեր նկատողութիւններն հետեւալներն են.

ա. Բնական գիտութեան վերաբերեալ հայերէն ձեռնարկներում գիտական բառ երը շատ վատ են կաղմուած. այսինքն նոքա կամ Հայոց լեզուի ոգուն հակառակ են, կամ իմաստով համապատասխան չեն և կամ շատ անձաշակ են. դրաբնակ՝ «ցորոշական շարժողանիւն»՝ «մարմնիներ»՝ «լուսնեան ինուդեղ»՝ «նորուանի ժամանակ»՝ «աշխատակ», ինչպատճեն, «զնանակ», պահանձ, ինչպատճեն, աղանձնի, ինչպատճեն, աղանձնի, ինչպատճեն, աղանձնի, ինչպատճեն, և այլն։

բ. Բնակ. գիտութեան վերաբերեալ հայերէն ձեռնարկներում երեւում է ստրկական հետեւողութիւն օտար լեզուներին. թարգմանիչներն իսկապէս բառերն են թարգմանում. նոքա ուշագրութիւն չեն դարձնում մինչև անգամ կանոնաւոր և հարազատ դասաւորութեան վերայ. իսկ այնպիսիները, որոնք հեղինակութիւն են անում, իրենց միտքն յայտնում են մեծ մասամբ օտար լեզուների աղբեցութեան տակ. կարծես թէ նոքա այդ ժամանակ մտա-

ծում են մի օտար լեզուով. և այս է պատճառ, որ եթէ մնք հայերէն բառերի տեղը օտար լեզուի բառեր շարելու լինենք, բնաւ վեասած չենք լինիր ոչ հայերէն թարգմանութեանն և ոչ բնագրին. Օրինակներ բերելն անհնարին է, այդ կը նշանակէր ամբողջ գքեր արտադրել, որ մեր նպատակից դուրս է:

Դ, Բնակ. գիտութեան վերաբերեալ հայերէն ձեռնարկները հրատարակուել են միշտ իբրև մի անդր անիկ գործ. կարծես նոցանից ոչ մէկը չունի իւր նախորդը. այս պատճառով և ամենայն մի նոր ձեռնարկ ոչ թէ կատարելագործութիւն է հնչ պէս վայելում է այդ ամեն գրաւոր մշակութիւններին, այլ ուրոյն հանդէս եկած մի երեսյթ է. նա ճանաչում է իրեն իբրև մի նոր փրկարար զօրութիւն կարծեցեալ անապատի մէջ, որն իրօք անապատ է, Մեր կարծիքով ամենայն նոր հեղինակ և թարգմանիչ պարտաւոր է իւր ընտական խելքին և հմտութեանն ապահովնելուց զատ՝ ուշագրութիւն դարձնել և իւր նախորդների վերայ ուսումնասիրել իւր ընտրած խնդրին վերաբերեալ բոլոր հայերէն հրատարակութիւնները և ձգտել իւր նոր ձեռնարկով կատարելագործելու հինը, Այս պէտք է մանաւանդ այն բանասէրներին, որոնք թէկ շատ վարժ և հմուտ լինեն իրենց մասնագիտութեան մէջ, սակայն հանգամանքների բերմամբ կարող են շատ տկար լինել հայերէնի գիտութեան մէջ. այդպիսիններին շատ օգտաւէտ է իրենց մասնագիտութեան վերաբերեալ հայերէն հրատարակութեւնների լուրջ ուսումնասիրութիւնը. Առանց դորան կարելի չէ մի որ և իցէ ճիւղի կատարելագործութիւն ոպասնել գրականութեան մէջ. իւրաքանչիւր նոր լցու տեսած երկասիրութիւն՝ զուրկ լինելով այդպիսի յատկութիւնից, կը թիւայ գրականութեան մէջ իբրև անմշակ նիւթ և կարող է ծառայել շատ սահմանափակ շրջանների պիտոքին, այն էլ կարծ ժամանակով. Աւելորդ է ասել որ այս հանգամանքը մեծ պակասութիւն է բերում մեր ժամանակի լուսաւորութեանը. և այդ է պատճառ, որ ներկայումն Հայոց մէջ երեցած ջանասիրութեան շափով արդինք չէ երեւում. մանկավարժական գրականութեան մէջ ևս ազարաղդաբար կրկնում է նոյն վնասակար երեսյթը, ինչ որ Հայոց շատ հասարակական հաստատութիւնների կեանքի մէջ լինում է. նախորդի շինածը քանդում է, յաջորդը. նախորդ եղելութիւններին նշանակութիւն չի տալիս յաջորդող սերունդը. և այս ասիական եսամօլութեան վատթար նշանաբանն է, որ խափանում է ամենայն կատարելագործութեան հնարաւոր ճպնապարհ հայոց դպրոցների, վանքերի, ընկերութիւնների և այլն առաջ, ինչպէս որ ներկայ հասարակական հաստատութիւնների պատմութիւնը տալիս է դորան բազմաթիւ անհերքելի փաստեր:

Դ, Մասնագիտական ձեռնարկներ պատրաստելու համար բա-

ւական չէ, որ մարդս ունենայ կամք մի որևիցէ ընտիր հեղինակութիւն թարգմանելու կամ փոխադրելու պէտք է ունենայ և պատրաստութիւն և մշակութեան միջոցներ Հայերէն ձեռնարկների մեծ մասն ապաբանդգաբար աճապարանքով կազմած հրատարակութիւններ են. հեղինակները կարեր պատրաստութիւն չեն ունեցել նոքա միայն ոգեգործած են եղել թեթև ուսումնասիրական գաղափարով, և այդ յափշտակութեան մէջ նոցա քաղցր է երևացել հեղինակութեան անունը, որը ժառանգելու համար կարծես բաւական են համարել օտար բառերը Հայերէն մեսրոպեան տառերով դրոշմել, թեթէ այս դիւրագին միջոցը չհրապուրէր նոցա, անկասկած Հայոց հեղինակները թուով պակաս կը լինէին, և տեսակով գերազանց մինչդեռ ներկայում, ընդհանրապէս Հայոց մատենացուցակները փայլում են միայն հեղինակների անուանական թուով. Ցանկալին քանակութիւնը չէ, այլ որպիսութիւնն է: Ինչ ասել կուզէ, որ երկասիրութեան որպիսութիւնը կախուած է լուրջ և ծանրակշիռ աշխատութիւնից որ կարօտ է և ժամանակի. մինչդեռ ներկայումն կան անձինք, որոնք շտապել են հեղինակութեան անուն ժառանգելու թեթև աշխատութեամբ. թէև դոցա աշխատութեան արժէքը կարող էր բարձր լինել թէ որ չշտապէին մի երկու տարրւայ մէջ երկու երեք կարկատուն հրատարակութիւններ անել:

Արդի Հայ երիտասարդութեան այս պակասութիւնը չափազանց վնասակար է զլիսաւորապէս մանկավարժական գրականակութեան զարգացմանը, այդ պատճառով և Հարկ համարեցինք այս տեղ շեշտել և յայտնել որ այդ է նոյն գրականութեան տկար լիելու զօրաւոր պատճառներից մէկը: Sapienti sat!

Մեր խօսքը վերջացնում ենք ցոյց տալով այն աղբիւրները, որոնցից պարտաւոր են օգուտ քաղել ապագայում մասնագէտ բանասէրները թէ գիտնական բառակազմութեան և թէ առհասարակ դարձուածների հարազատութեան համար:

Ա, Անէտիկու. Մխիթարեան միաբանութեան հրատարակութիւններն ընդհանրապէս բովանդակում են շատ յաջող ընտրած բառեր և գեղեցիկ դարձուածներ. որովհետև այդ միաբանութեան անդամներն հաւասարապէս տեղեակ և վարժ են ոչ միայն Հայերէնի այլ և օտար հին-և նոր լեզուների գիտութեան մէջ: Անէտիկու հրատարակութիւնների մէջ առաջին տեղը բռնում է «Բաղմավէպը», որ 1843 թուից սկսած անիտափան գյութիւն ունի և իւր բազմակողմանի բովանդակութեամբ իրեն հարուստ պատկերազարդ շտեմարան կարող է մեծապէս նպաստել նորագոյն հրատարակութիւնների կատարելագործութեանը, բաղմավէպից զատ կան Մխիթարեան միաբանութեան հրատարակութիւնների մէջ և առանձին

ձեռնարկներ, որոնք են՝ 1. Բանալի երևութից բնութեան, 2. Բը-նարանութիւն կամ Գիղիքա, երկու հատոր, 3. Մեքենականութիւն, 4. Գիսաւորք և 5. Տարրաբանութիւն կամ Քիմիա, երեք հատոր, Սոքա եթէ որեկից պակասութիւն ունին զիանական սկզբունքների կողմց, սակայն հայերէն լեզուի, դարձուածների և բառակազմութեան նկատմամբ կարող են ընդհանրապէս օրինակ լինել բանասէրների համար, Այսպէս են և համարողութեան (մատեմատիկա) վերաբերեալ ձեռնարկները, Ոչ պակաս բնապատմական անուններ բովանդակում են և Հ. Ե. Հիւրմիւղեանի «Բուրաստան» և Վիրգիլիոսի «Մշակականի» հայերէն թարգմանութիւնը, թէև երկուսն ել գրաբառ, ինչպէս և եռահատոր Տարրաբանութիւնը:

բ) Վիէննայի Միիթար. միաբանութիւնը բնական և համարողական գիտութիւնների մէջ Հայոց մանկավարժական գրականութեանը շատ նիւթեր է պատրաստել գլխաւոր աղբիւրն է Շերոպաց օրագիրը, որ 1858 մինչև 1863 թիւն հրատարակուեցաւ Վիէննայութ. Եւրոպայից զատ Վիէննայի Միիթարեաններն ունին և շատ մասնաւոր հրատարակութիւններ, որոնցից նշանաւորներն են՝ 1) Աշխարհազրութիւն ուսումնական, բնական քաղաքական, չ. Յովաննեանի, 1835 թ. 2) Աշխարհ. ուսումնական և բնակ. և տեսութիւն երկրագնդոյ չ. Պալճեանի 1849 թ. 3) Ընդհանուր տեսութիւն երկրագնդոյ չ. Պալճեանի, 1839 թ. 4) Հրահանգը աստեղագիտութեան ի վերայ գիսաւոր աստեղաց (աշխարհաբար) չ. Յովաննեանի, 1841 թ. 5) Հրահանգը աստեղագիտական ի վերայ եկկրագնտոյ, չ. Պալճեանի 1845 թ. 6) Օդերաբանութիւն չ. Տէրտէրեանի, 1850, 7) Տարեոյն չորս եղանակները չ. Գամբճեանի 1852 թ. 8) Բնագիտութեան տարերք (Ֆիղիքա) չ. Տէրտէրեանի 1865 թ. 9) Բնագիտութիւն փորձառական կամ Գիղիքա քիմիայով չ. Նուրիճաննեանի, 1856 թ. 10) Բնական գիտութիւն կամ Գիղիքա չ. Սաղաթէլեանի, 1842 թ. և 11) Բընակ. պատմութիւն կենդանաբանութիւն, տնկարանութիւն և հանքաբանութիւն) երկու հատոր, 1844/55 թ. և այլն, թէ Վենետիկու և թէ Վեննայի հրատարակութիւնները մեծ մասամբ ունեն և իրենց բառարանը, որ շատ դիւքացնում է ուսումնասիրութեան գործը:

գ) Այս երկու նշանաւոր աղբիւրներից զատ կան և ուրիշները զանազան տեղեր հրատարակուած, զորօրինակ Մ. Եւթիւճեանի «Կիլիկիա» ամսագիրը Կ. Պոլիս 1867/5 թ. չ. Պ. Այվաղեանի «Մասեաց Աղաւնին» Փարիզ և Թէոդոսիա 1888/61, Ս. Նազարեանցի «Հիւսիսափայլը» և «Նոր Հայախօսութեան Հանդէսը» Մուգուա 1858 թ. և այլն և այլն, Սոցանից զատ եղել են և մասնաւոր հրատարակութիւններ Մուսաստան և Տաճկաստան, զորօրինակ՝ Ս. Պետերբուրգի

Հայ ուստանողների հրատարակած Գրուրէի թուարանութիւնն և Կրիւգերի Փիզեքան. պ. Աղայիանցի «Սկզբ. բացատր. բնութեան երկայթների» պ. Քիշմիշեանի «Բուսաբանութեան կրկնողական դասընթացը» և այլ այսպիսիները.

Սպա բոլորն էլ ունեն իրենց արժանաւորութիւններն և պահանջութիւնները. իւրաքանչիւր նոր հեղինակի պարտաւորութիւնն է ուղղել պահասութիւններն և իւր նոր ձեռնարկով առաջարկել գրականութեան մէջ աւելի մշակուած և աւելի կատարելագործուած օրինակ, որի մէջ կերևի և գրականութեան յառաջադիմութիւնը:

Առ հասարակ բանասէրների գործը թեթևացնելու համար լաւ կը լինէր, որ մասնագէտ անձինք վերսպրեալ աղրիւրներն ուսումնասիրէին և համեմատութեամբ զտելով բոլոր գիտնական բառերը՝ կազմէին մի գիտնական բառ ագրքու կ, որը կարող եր առաջնորդ լինել թէ օտար զրգեր կարգալու և թէ օտար լեզուից հայերէն թարգմանելու ժամանակ, Երբ այսպիսի մի գործ կատարուած լինի, այնուհետեւ թարգմանիչներն և հեղինակները միջոց կունենան պարապելու իրական յառաջադիմութեամբ և կատարելագործութեամբ և նոցա գործը մեքենականից կը փոխարկուի գէպի կենսականը. և այդ իսկ է մեր ժամանակի էական պահանջը:

Եթէ այսուհետեւ էլ Հայոց բնապատմական հրատարակութիւնները հանդէս գան նոյն անմշակ և թոյլ կազմութեամբ, ինչպէս են վերսպրեալ երեք հրատարակութիւններն, այն ժամանակ վստահ կարելի է ասել, որ մեր կողմի հայ բանասէրների մէջ գեռ չի կարող բնակիլ ծանրակշիռ և հիմնաւոր աշխատութեան ողին, այլ նոցա աչքին. հրապուրիչ է միայն թեթև անուն վաստկելու իղձը, որ ափսո՞ն շատ վաղանցի՞կ է:

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ:

Յուլիս ամսին լոյս տեսաւ. Թիֆլիսում պ Յ. Նազարեանցի «Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի» պատմութիւնը նկատեած է գրքով, որ խևապէս անցեալ տարուայ հայ ուսուցիչների գործունեութեան արձանագրութիւնն է: Պ. Նազարեանցը բեեւ լոկ արձանագրողի պաշտօն ստանճնած նկարազրում է այդ ժողովի մէջ պատահած մանրամասնութիւնը, սակայն երբեմնապէս արձանագրողի պաշտօնին հակառակ քննում ու դատում է ժողովներ դեկանարոն եւ դասախոսութիւնը անող անձանց: Ի միջի այսոց պ. Նազարեանցի քննութեան եւ դատողութեան ենթարկուել է մեր մանկավարժ պ. Սեղրակ Մանդինեանցը, որի հմտութիւնը իւր մասնագիտութեան մէջ արդէն յայտնի է մանկավարժութեամբ պարապող անձանց եւ որի գործակարութիւնը այդ ժողովների ժամանակ մէծ արդիւնք ունեցաւ. ուստի ափսոսում ենք որ պ. Նազարեանցը իւր ուժերից բարձր գործ է ստանճնել եւ իւր քննութեանն ենթարկել է մի այնպիսի անձի գործունեութիւնը, որին հասկանալու համար դեռ էլի ջան պէտք է պարապէ:

\* \*

Այս ամարային արձակուրդի ժամանակ Ս. Պետերբուրգում մանկավարժ Վինագրադովի առաջնորդութեամբ եւ դեկանարութեար կազմել էին երեխայոց համար Կը թողարկած գիրքուածքը ներկայացնեամբ երեխայը գնում էին քաղաքից դուրս՝ դաշտ, անտառ. եւ այն եւ տեղն ու տեղը ուսանում էին բնական երեւոյթներ: Այդ գործը մէծ յաջողութիւն է ունեցել, զարքեցրել է երեխայոց մէջ հետաքրքրութիւն:

\* \*

Թիֆլիսի բեմական վերատեսուչ, ինչպէս հաղորդել էինք, նըշանակուեցաւ. պ. Ղազարոս Աղայեանցը, որ արդէն այս ամսով այցելել է իւր քեմի մէծ մասի ուսումնարաններին: Նա պտտել է ամբողջ Ախալքալաքի վիճակը, որ վաղուց է բեմական վերատեսչի երես չէ տեսել:

\* \*

Մեեր լսեցինք որ Մեպտեմբերի սկզբներում լոյս կտեսնի Մօսկվայի պլոտեսոր Դասիդովի Նըկ թագավորն ու թարգմանութեամբ պ. Վախտանգ Հասան-Զալյանի: Վաղուց արդէն մէծ կա-

բեւորութիւն կար նայ դպրոցների եւ միջնակարգ ուսումնարանների համար երկրաշափութեան ձեռնարկի միջ, սրովնետեւ մինչեւ այժմ եղածները չեին լրացնուած այդ առարկայի պահանջը:

\* \*

Վարժարանի այս համարը մենք ուղարկուամ ենք մեր անցեալ տարրուայ բախանորդներին. խկ երկրարդ համարը մենք կառարկենք նոցա, որոնք մինչեւ առաջիկայ Սեպտեմբերի 10-ը կյայտնեն իւրեանց ցանկութիւնը բախանորդագրութիւնը նորոգելու համար:

\* \*

Խմբագրութիւնս զնորհակալութեամբ ստացաւ պ. Յ. Նազարեանցի «Հայոց առաջին ընդհանուր Ռևուցիական Ժողովի պատմաթիւնը» վերնագրով զրոյկը:

\* \*

Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի տեսուց՝ հոգաբարձուների միամայն հասանութեամբ, ընտրուեցաւ պ. Պօղոս Ղամբարեանը: Ի սրտէ զնորհանորում ենք քէ պ. պ. հոգաբարձուներին այդ ընտրութեան համար եւ քէ նոյն խոկ պ. Ղամբարեանին, որին այնքան սիրելի է ուսումնարանական գործը եւ մանաւանդ Ներսիսեան Դպրանոցը, որի դեկանարելու համար հասարակութիւնը նորա պիս անձին էր սպասուամ:

---

ԽՄԲԱԳԻՐ—ՀԲԱՏԱՐԱԿՈՎ Ն. ԽՈՍՔՈՎԵՍ. Ն

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Августа 1883 г.

Типография М. Вартаняцца и К. Троицк. № 11.